ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե` ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.` (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը` 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն` ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը` 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը` 1730: **Գինը` 100 դրամ**

ISSN 1829-3468

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 12 ԱՊՐԻԼԻ 2017Թ.
№ 17 (435)

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

*Օ՜, հայրենիք, դառն ու անուշ:*

*ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ*

## Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքները




Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն ապրիլի 9-ին ամփոփել է ՀՀ Աժ 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքները:

Ըստ որոշման՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընտրվել է, եւ մանդատները բաշխվել են հետեւյալ համամասնությամբ՝ Հայաստանի հանրապետական կուսակցության-58 մանդատ, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք-31 մանդատ, «Ելք» կուսակցությունների դաշինք - 9 մանդատ, «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն - 7 մանդատ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 8-րդ մասի համապատասխան կատարված հաշվարկի արդյունքում թիվ 12 ընտրատարածքի (Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող) հասանելիք մանդատների թիվը հետեւյալն է՝ Հայաստանի հանրապետական կուսակցություն-2 մանդատ, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք-1 մանդատ:

**Սեփ. լրատվություն**

## Մեկնարկել է Սյունիքում ազատ տնտեսական գոտու ստեղծման գործընթացը



**Գործադիրն ընդունել է «ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային, Կարճեւան գյուղական համայնքների եւ Արաքս գետով պարփակված տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու, «Սյունիք ազատ տնտեսական գոտի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ ճանաչելու, ինչպես նաեւ ազատ տնտեսական գոտու գործունեության վերաբերյալ կազմակերպչի կողմից ներկայացվող հաշվետվության ձեւերը հաստատելու մասին» որոշում:**

Հիմնավորման համաձայն՝ Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ, ունենալով առեւտրի արտոնյալ ռեժիմ ԵՄ հետ եւ ընդհանուր սահման ԻԻՀ հետ, ունենալով միջազգային վարկանիշներով հաստատված գրավիչ ներդրումային եւ գործարար միջավայր՝ ԻԻՀ հետ սահմանակից ազատ տնտեսական գոտի ունենալու դեպքում կարող է լուրջ հետաքրքրություն ներկայացնել Հայաստանում արտահանման կողմնորոշում ունեցող արտադրություն կազմակերպելու, Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված առեւտրային եւ լոգիստիկ հնարավորություններն օգտագործելու համար: Ազատ տնտեսական գոտին առավել արդյունավետ կգործի ԻԻՀ սահմանագծին՝ Սյունիքի մարզում, ինչը կլուծի ոչ միայն մարզի սոցիալ-տնտեսական խնդիրները, այլ նաեւ կնպաստի ՀՀ արտասահմանյան կապիտալի ներհոսքին, ՀՀ տարածքային զարգացման, ԻԻՀ հետ տնտեսական կապերի ամրապնդման, ԵԱՏՄ անդամակցության, ԵՄ հետ առկա հարաբերությունների եւ տարվող բանակցությունների ներուժի առավել արդյունավետ օգտագործման: ՀՀ Սյունիքի մարզի տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծումը նպատակ

էջ 2

## Սյունիքը վստահեց Սերժ Սարգսյանի գլխավորած կուսակցությանը

**Սյունիքի ու Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում ապրիլի 2-ի ընտրություններում քվեարկելու իրավունք է ունեցել 162.451 քաղաքացի, որից քվեարկությանը մասնակցել է 108.697 հոգի (66.91 տոկոս):**



Կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքներն ընտրատարածքում ստացել են հետեւյալ քանակությամբ քվեներ.

- «Ելք» կուսակցությունների դաշինք - 3415 (3.14 տոկոս),
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցություն - 705 (0.65 տոկոս),
- «Հայկական վերածնունդ» կուսակցություն-3009 (2.77 տոկոս),
- «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք-31395 (28.9 տոկոս),
- «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք-1142 (1.05 տոկոս),
- Հայաստանի հանրապետական կուսակցություն-58137 (53.49 տոկոս),
- Հայաստանի կոմունիստական կուսակցություն-546 (0.5 տոկոս),
- «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինք-2106 (1.94 տոկոս)
- Հայ յեղափոխական դաշնակցություն-7883 (7.25 տոկոս):

Այսպիսով՝ ընտրատարածքում առաջատար դիրքեր են զբաղեցրել Սերժ Սարգսյանի գլխավորած Հայաստանի հանրապետական կուսակցությունը (53.49 տոկոս), «Ծառուկյան» դաշինքը (28.9 տոկոս) եւ Հայ յեղափոխական դաշնակցությունը (7.25 տոկոս):

Առավել շատ քվեներ են ստացել տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի հետեւյալ թեկնածուները՝

1. Հակոբյան Վահե (ՀՀԿ)-21823 (20.08 տոկոս),
2. Արսենյան Աշոտ (ՀՀԿ)-17563 (16.16 տոկոս),
3. Սիմոնյան Մերուժան («Ծառուկյան» դաշինք)-8168 (7.51 տոկոս),
4. Առուշանյան Առուշ (ՀՀԿ)-6879 (6.33 տոկոս),
5. Հարությունյան Դավիթ («Ծառուկյան» դաշինք)-4696 (4.33 տոկոս),
6. Սարգսյան Ավետ (ՀՀԿ)-4661 (4.29 տոկոս),
7. Հակոբջանյան Աղասի («Ծառուկյան» դաշինք)-4373 (4.02 տոկոս),
8. Բագրատյան Սերգեյ («Ծառուկյան» դաշինք)-4033 (3.71 տոկոս):

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ թիվ 12 ընտրատարածքում քվեարկելու իրավունք է ունեցել մոտ 9.5 հազար զինվորական:

* * *

**Աժ ընտրությունները Սյունիքի մարզկենտրոնում. միայն թվեր:**

Մարզկենտրոն Կապանում քվեարկելու իրավունք ունեցող 30790 քաղաքացիներից քվեարկությանը մասնակցեց 19507 հոգի (63.35 տոկոս):

Կապանի ընտրողները, ըստ նախնական տվյալների, վստահության քվե են տվել նախեւառաջ Սերժ Սարգսյանի գլխավորած քաղաքական ուժին՝ Հայաստանի հանրապետական կուսակցությանը՝ 7839 ձայն (40.2 տոկոս):

5667 հոգի իրենց քվեն տվել են «Ծառուկյան» դաշինքին (29.1 տոկոս):

1439 հոգի քվեարկել է ՀՅԴ թեկնածուների օգտին (7.4 տոկոս):

Կապանի քաղաքական դաշտի երբեմնի ազդեցիկ ուժերից մեկի՝ «Օրինաց երկրի» իրավահաջորդ «Հայկական վերածնունդ» կուսակցության օգտին քվեարկել է 846 հոգի (4.34 տոկոս):

Հինգերորդ հորիզոնականը զբաղեցրել է «Ելք» դաշինքը՝ 603 քվե (3.1 տոկոս):

էջ 4

# Մեկնարկել է Սյունիքում ազատ տնտեսական գոտու ստեղծման գործընթացը

էջ 1

ունի նպաստել ՀՀ տարածքային համաչափ զարգացմանը, ազգային տնտեսության գլոբալ մրցունակության բարձրացմանը, մրցունակ արտադրանքի թողարկմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, երկրի ներդրումային գրավչության բարձրացմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքի ստեղծմանը, արտահանման ծավալների ավելացմանը, ինչպես նաեւ նոր աշխատատեղերի ստեղծմանը, ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության ձեռքբերումների առավել արդյունավետ օգտագործմանը՝ հօգուտ երկրի կայուն տնտեսական զարգացման ապահովման: Կարեւորելով ազատ տնտեսական գոտու ստեղծումը՝ Կարեն Կարապետյանը ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանին հանձնարարել է Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի եւ Վրաստանի գործըն-*կողմի հետ»,* – ընդգծել է կառավարության ղեկավարը: Վարչապետը հետաքրքրվել է նախարարից, թե որ փուլում են գտնվում իրանական կողմի հետ արտահանման ընկերության ձեւավորման վերաբերյալ բանակցությունները: Ս.Կարայանը տեղեկացրել է, որ բանակցությունները ակտիվ ընթանում են եւ Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալը 10 օր առաջ այցելել է Իրան, որտեղ քննարկումներ են իրականացվել: Իրանական կողմը խոստացել է, որ մոտ ժամանակներս այդ կազմակերպության ձեւավորման վերաբերյալ առաջարկություն կներկայացնի: Կարեն Կարապետյանը հորդորել է հետեւողական լինել այդ հարցում:

Կառավարության մեկ այլ որոշմամբ էլ դադարեցվել է «Ինստիգեյթ ռոբոտիքս» ՓԲԸ «Ալյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվությունը: Վարչապետը ՀՀ տնտեսական զարգացման եւ ներ-



կերներին ուղարկել այդ տեղեկատվությունը հարթակի պատրաստ լինելու վերաբերյալ: *«Մենք պատրաստ ենք պայմաններ տրամադրել տվյալ երկրների տնտեսվարողներին, որոնք շահագրգռված են համագործակցելու իրանական*

դրումների նախարարին հանձնարարել է տեղեկանք պատրաստել ազատ տնտեսական գոտիների եւ այնտեղ գործունեություն ծավալող ընկերությունների գործունեության արդյունավետության վերաբերյալ:

**gov.am**



# Գորիսը հռչակվեց 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք

**Ապրիլի 7-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Տաշքենդում մասնակցեց եւ ելույթ ունեցավ ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստին:**

Արտգործնախարարների խորհրդի նիստը մեկնարկեց նեղ ձեւաչափով, ապա շարունակվեց ընդլայնված կազմով պատվիրակությունների մասնակցությամբ:

Նիստի օրակարգում ընդգրկված էին կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման, արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ խորհրդատվությունների անցկացման, կառույցի արդիականացման հարցեր:

ԱՊՀ մասնակից երկրների ԱԳ նախարարները մտքեր փոխանակեցին միջազգային օրակարգի հրատապ խնդիրների շուրջ:

Արտաքին գործերի նախարարները հայտարարություն ընդունեցին քրիստոնյաների, մահմեդականների եւ այլ դավանանքների ներկայացուցիչների նկատմամբ անհանդուրժողականության եւ խտրականության անթույլատրելիության մասին:

ԱՊՀ անդամ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներն անդրադարձան իրավապահ, կիբերանվտանգության, մշակութային, կրթական ոլորտներում համագործակցության սերտացման հարցերին:

Արտգործնախարարների խորհուրդը որոշեց հավանություն տալ Հայաստանի Գորիս քաղաքը որպես 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակելու մասին որոշման նախագծին:

Նիստի մասնակիցները քննարկեցին եւ հավանության արժանացրին 16 փաստաթղթերի նախագծեր:

Որոշվեց ԱՊՀ արտգործնախարարների խորհրդի հաջորդ նիստը գումարել 2017թ. հոկտեմբերին Մոսկվայում:

**ՀՀ արտաքին գործերի նախարարության մամլո հաղորդագրություն**

# Ազգային ժողովի ընտրություններ

## Որքա՞ն քվե են ստացել պատգամավորի թեկնածուները թիվ 12 ընտրատարածքում

**«Ելք» կուսակցությունների դաշինք**
1. Արսենյան Հովիկ Հայկազի-597
2. Գեւորգյան Տիգրան Համլետի-262
3. Գրիգորյան Սրբուհի Էդիկի-248
4. Եդիգարյան Քրիստինե Ռազմիկի-143
5. Խալափյան Արշավիր Սերժիկի-323
6. Հակոբյան Արման Արմենի-260
7. Հովհաննիսյան Նարա Անդրանիկի-113
8. Ղազարյան Մարինա Կամոյի-110
9. Սարգսյան Արամ Ջավենի-520
10. Սարգսյան Նորիկ Արմենակի-243

**«Ազատ դեմոկրատներ» կուսակցություն**
1. Առաքելյան Արմեն Լենիկի-44
2. Ավթանդիլյան Քրիստինե Գրիշայի-62
3. Բագրատյան Վարշամ Վլադիկի-276
4. Դավթյան Արման Սերյոժայի-52
5. Հարությունյան Սամվել Վաղարշակի-80
6. Հովհաննիսյան Աննա Աշոտի-32
7. Սարդարյան Գագիկ Վառլենի-62

**«Հայկական վերածնունդ» կուսակցություն**
1. Անդրեասյան Մասիս Ռուբիկի-427
2. Գրիգորյան Միքայել Անուշավանի-58
3. Դավթյան Ալվարդ Հրանտիկի-400
4. Իսաջանյան Հովիկ Համլետի-317
5. Հարությունյան Արմեն Մելիքսեթի-634
6. Հարությունյան Նարինե Համլետի-62
7. Մարգարյան Բենիամին Գավրուշայի-410
8. Մինասյան Արթուր Սլավիկի-146
9. Միքայելյան Թերեզա Վազգենի-297
10. Պետրոսյան Ալիսա Վաղշոյի-76

**«Ծառուկյան» կուսակցությունների դաշինք**
1. Ամիրյան Սլավիկ Սուրենի-2866
2. Բագրատյան Սերգեյ Պապաշի-4033
3. Բախշյան Նաիրի Էդիկի-2469
4. Հակոբյան Ռոբերտ Գուրգենի-2752
5. Հակոբջանյան Աղասի Մամիկոնի-4373
6. Հարությունյան Դավիթ Խաչիկի-4696
7. Շափաղաթյան Հասմիկ Նապոլեոնի-241
8. Պետրոսյան Սոֆյա Ղարիբի-140
9. Սարգսյան Թամարա Վոլոդյայի-150
10. Սիմոնյան Մերուժան Համլետի-8168

**Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք**
1. Ավագյան Արամ Արմենակի-125
2. Ավետիսյան Ավետիկ Քաջիկի-92
3. Բաբաջանյան Մովսես Միսակի-186
4. Գալստյան Արտաշես Մուխսիի-100
5. Գեւորգյան Անի Ռուբենի-76
6. Հարությունյան Գոհար Զաքարի-55
7. Մաթեւոսյան Դավիթ Ղեւոնդի-214
8. Մելիքյան Լիդա Լեւոնի-13
9. Մովսիսյան Գարիկ Սպարտակի-78
10. Մուսախանյան Արշակ Աշոտի-65

**Հայաստանի հանրապետական կուսակցություն**
1. Առաքելյան Նարինե Սամվելի-425
2. Առուշանյան Առուշ Գագիկի-6879
3. Արսենյան Աշոտ Եղիշեի-17563
4. Գրիգորյան Մուրազ Լենդրոշի-1613
5. Զաքարյան Մխիթար Սեյրանի-3516
6. Հակոբյան Վահե Ալբերտի-21823
7. Մաքունց Արեւիկ Արտուշի-434
8. Սարգսյան Ավետ Լավրենտի-4661

**Հայաստանի կոմունիստական կուսակցություն**
1. Բոյաջյան Անահիտ Թորոսի-105
2. Գեւորգյան Հարություն Ռազմիկի-45
3. Խաչատրյան Քաջիկ Մակարի-61
4. Հակոբյան Էդիկ Գրիգորի-84
5. Հայրապետյան Վալերիկ Գրիգորի-32
6. Հարությունյան Անուշ Խաժակի-65
7. Մակարյան Սերյոժա Հայրիկի-51

**«Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինք**
1. Ավետիսյան Հասմիկ Գագիկի-131
2. Բաղալյան Նաիրա Վալենտինի-45
3. Դավթյան Արթուր Սերոբի-203
4. Հարությունյան Վարդան Պետրի-382
5. Հովհաննիսյան Ռադիկ Վալերիկի-281
6. Ղազարյան Մատվեյ Աշոտի-515
7. Մարգարյան Սամվել Արտուշի-94
8. Օհանյան Միխայել Վոլոդյայի-293

**«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն**
1. Աթայան Արտուր Արտավազդի-450
2. Ափունց Ալեք Աշոտի-757
3. Գեւորգյան Գագիկ Լեռնիկի-1774
4. Գեւորգյան Վարդան Ֆերդինանտի-955
5. Դանիելյան Վահե Յուրիկի-560
6. Համբարձումյան Հերմինե Արմենի-493
7. Մանուկյան Սասուն Բորիսի-644
8. Մկրտչյան Արփինե Արսենի-263
9. Պետրոսյան Նունե Աշոտի-1191
10. Սարգսյան Արտակ Սամվելի-579

# ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ. «Երբ կանցնի աշխատանքի նոր ԱԺ-ն եւ երբ հայտնի կլինի նոր կառավարության կազմը»



**Tert.am-ի հետ զրուցում «Սահմանադրական իրավունքի կենտրոնի» խորհրդի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը նշեց, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում կընդունի քվեարկության օրվանից հետո 7-րդ օրը, արդեն ապրիլի 27-ին ԱԺ-ն կգումարի նստաշրջան՝ ստանձնելով իր լիազորությունները, իսկ կառավարությունը նույն օրը հրաժարական կտա:**

**– Պարո՛ն Դանիելյան, նախ, ի՞նչ գնահատական կտաք անցկացված խորհրդարանական ընտրություններին, արդյո՞ք Ընտրական օրենսգրքի փոփոխությունները նպաստեցին ընտրախախտումների նվազմանը:**

– Զուտ ընթացակարգային տեսանկյունից, գործող Ընտրական օրենսգիրքը, այո, առավել շահեկան վիճակում է, քանի որ ավանդաբար ձեւավորված ու մասամբ անվերահսկելի իրավախախտումներն այս օրենսդրական ակտի պարագայում գրեթե անհնար էին: Ինչ վերաբերում է ակնհայտ կամ ընտրողի կամքի վրա ազդող այլ բնույթի իրավախախտումներին, ընդհուպ՝ ընտրակաշառքի ու բռնության դեպքերին, ապա դրանք օրենսդրական ակտի որակի հետ աղերսներ չունեցող հարցադրումներ են: Օրենսդրական ակտով արդեն իսկ նախատեսված էին եւ փաստացի գործում էին վերահսկողության աննախադեպ լծակներ, ավելին՝ օրենսդրի լիազորությունների տիրույթից դուրս էր:

Ցանկացած երկրում այդպիսի բացասական երեւույթները բացառելու գործառույթի արդյունավետությունը պայմանավորված է հասարակության ինքնագիտակցության աստիճանով եւ, բնականաբար, իրավասու մարմինների աշխատանքի որակով:

**– Նոր խորհրդարանը, ըստ օրենքի, ե՞րբ պիտի անցնի աշխատանքի, կառավարության ձեւավորման վերջնաժամկետը ո՞րն է:**

-Նախ, նորընտիր Ազգային ժողովը պետք է ստանձնի իր լիազորությունները, որի սկիզբը, ըստ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 90-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սկսվում է նախորդ գումարման ԱԺ լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր ԱԺ առաջին նստաշրջանի բացման պահին: Սակայն այս հոդվածը կգործի միայն ԱԺ ներկայիս 6-րդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից, ինչը բխում է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 209-րդ հոդվածի 3-րդ մասից:

Տվյալ դեպքում շարունակելու է գործել 2005թ. փոփոխություններով Սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի՝ նորընտիր ԱԺ առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի ընտրությունից հետո՝ 3-րդ հինգշաբթի օրը: Ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ-ն որոշում կընդունի քվեարկության օրվանից հետո 7-րդ օրը, ինչը նշանակում է, որ արդեն ապրիլի 27-ին ԱԺ-ն կգումարի նստաշրջան՝ ստանձնելով իր լիազորությունները: Ինչ վերաբերում է կառավարության ձեւավորման կարգի ու ժամկետների վերաբերյալ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 149-րդ հոդվածին, ապա այն կգործի միայն նորընտիր ՀՀ նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը, հետեւաբար, դարձյալ շարունակելու ենք ղեկավարվել 2005թ. փոփոխություններով Սահմանադրությամբ, մասնավորապես՝ դրա 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, նույն ապրիլի 27-ին կառավարությունը հրաժարական կտա, որը նույն օրն ընդունելուց հետո, ՀՀ նախագահը 10-օրյա ժամկետում վարչապետ է նշանակելու, իսկ կառավարությունը կկազմավորվի վարչապետի նշանակումից հետո՝ 20-օրյա ժամկետում: Այդ ընթացքում կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչ նոր կառավարության կազմավորումը:

**– Վարչապետի լիազորությունների ընդլայնումը կրկին չի՞ նշանակում, որ կառավարումը կենտրոնանում է մեկ անձի ձեռքերում:**

– Կառավարման բնույթն ու արդյունավետությունն է հենց ենթադրում, որ այն կենտրոնանա, հակառակն է խոցելի, երբ այն իրականացվում է անորոշ դեմքով, սակայն պատասխանատու է լինում բացառապես կառավարությունը: Տվյալ դեպքում խնդիրը հնարավոր չարաշահումներն են, իսկ դա կանխարգելող գործիքը ոչ թե կառավարման լիազորությունների անհարկի մասնատումն է, այլ խորհրդարանական ու քաղաքացիական գործուն վերահսկողությունը, որոնք խորհրդարանական կառավարման ձեւի պարագայում էապես հարստացվել են: Ընդ որում՝ դրանց ազդեցությունը առավել նկատելի է դարձել, քանզի ինքնուրույն լծակներով է օժտվել նաեւ քաղաքական ընդդիմությունը, վերջինս արդեն մի շարք էական նախաձեռնություններում կաշկանդված չի լինի մեծամասնության դիրքորոշմամբ եւ կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել, օրինակ՝ պատգամավորների առնվազն մեկ քառորդի պահանջով կարող է ձեւավորվել քննիչ հանձնաժողով եւ այլն: ■

## Փոխարինողը պետք է լինի ռեյտինգային հաջորդ ամենաբարձրը. ինքնաբացարկների խճանկարը

**Ապրիլի 2-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ամփոփեց ապրիլի 9-ին:**

Վերջնական արդյունքների հրապարակումից հետո կսկսվի ինքնաբացարկների փուլը: Կուսակցություններն իրենց ներսում կորոշեն, թե ովքեր են իրենց մանդատները զիջելու:

NewsBook-ի հետ զրույցում ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը բացատրեց, որ եթե ինքնաբացարկ հայտնողը լինի ռեյտինգային թեկնածուներից, ապա նրան փոխարինողը պետք է լինի ռեյտինգային ցուցակից:

Ի դեպ, եթե օրինակ՝ Սյունիքի մարզում ինքնաբացարկ հայտնի մարզպետ Վահե Հակոբյանը, ապա ընտրակարգը չի ենթադրում, որ նրան փոխարինողը լինելու է հենց Սյունիքի մարզից:

*«Պարտադիր չէ, որ նույն ընտրատարածքից լինի: Փոխարինողը պետք է լինի ռեյտինգայինով հաջորդ ամենաբարձրը: Բանաձեւով է հաշվարկվելու»,* – ասաց Դանիելյանը:

**7 ապրիլի 2017թ.**
**newsbook.am**

# Եվ այնուամենայնիվ ՀՀԿ-ն Սյունիքի մարզում նահանջում է...

Այս օրերին առիթ ենք ունեցել ասել՝ Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում ապրիլի 2-ի ընտրություններում քվեարկելու իրավունք է ունեցել 162451 քաղաքացի, որից քվեարկությանը մասնակցել է 108697 հոգի (66.91 տոկոս):

Հայաստանի հանրապետական կուսակցությունը դրանից ունեցել է 58137 քվե (53.49 տոկոս):

Ի՞նչ գնահատական տալ ՀՀԿ-ի արդյունքներին՝ մի կողմ թողնելով մեր մարզի պատասխանատուների տեղի-անտեղի եւ մեծադղորդ հավաստիացումներն առ այն, որ Սյունիքի մարզում Հանրապետականը ստանալու է քվեարկության մասնակիցների մոտ 70 տոկոսի վստահությունը:

Ժամանակն է ամփոփելու ապրիլի 2-ի արդյունքները նաեւ այդ առումով:

Մինչ այդ՝ մի ճշտում. համեմատությունը կատարում ենք թիվ 12 ընտրատարածքի (Սյունիքի, Վայոց ձորի մարզերը միասին վերցրած) եւ Սյունիքի մարզը նախկինում ընդգրկած երկու ընտրատարածքի ցուցանիշների միջեւ:

Եվ այսպես՝ թիվ 12 ընտրատարածքում ՀՀԿ-ն 2017թ. ապրիլի 2-ին ստացավ 58137 քվե կամ քվեարկության մասնակիցների 53.49 տոկոսը:

**Հիմա անդրադառնանք նախորդ՝ 2012թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրություններին:**

Քվեարկության իրավունք ունեցող 119703 ընտրողից այդ օրը Սյունիքի մարզում քվեարկությանը մասնակցեց 85569 հոգի (անվավեր քվեաթերթիկները չեն մտնում դրա մեջ), որը կազմում է ընտրողների 71.5 տոկոսը:

Համամասնական ընտրակարգով ՀՀԿ-ն Սյունիքի մարզում ստացավ 51901 ձայն, որը կազմում է քվեարկության մասնակիցների 60.7 տոկոսը:

Մեղրու եւ Կապանի տարածաշրջաններն ընդգրկող ընտրատարածքում (մեծամասնական ընտրակարգ) պատգամավորի ՀՀԿ-ական թեկնածու Վահե Մաքսիմի Հակոբյանը ստացավ 22751 ձայն կամ քվեարկության մասնակիցների (34201, որի մեջ չեն մտնում անվավեր քվեաթերթիկները) 66.5 տոկոսը:

Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններն ընդգրկող ընտրատարածքում (մեծամասնական ընտրակարգով) պատգամավորի ՀՀԿ-ական թեկնածու Հայկ Գրիգորյանը ստացավ 19894 ձայն կամ քվեարկության մասնակիցների 57.4 տոկոսը (34637 ընտրողից, որի մեջ չեն մտնում անվավեր քվեաթերթիկները):

**Իսկ հիմա տեղափոխվենք 2007թ. մայիսի 12:**

Ազգային ժողովի ընտրությանն այդ օրը Սյունիքի մարզում քվեարկելու իրավունք ուներ (համամասնական ընտրակարգով) 105799 հոգի, որից քվեարկությանը մասնակցեց 72561 հոգի (անվավեր քվեաթերթիկները հանած), որը կազմում է ընտրողների 68.6 տոկոսը:

Նրանցից ՀՀԿ-ի օգտին քվեարկեց 36112 ընտրող, որը կազմում է վավեր քվեաթերթիկների 49.8 տոկոսը:

Նույն ընտրություններում (մեծամասնական ընտրակարգով) պատգամավորի թեկնածու Վահե Մաքսիմի Հակոբյանը Մեղրու եւ Կապանի տարածաշրջաններն ընդգրկող ընտրատարածքում ստացավ 27104 ձայն (32300 վավեր ձայներից) կամ քվեարկության մասնակիցների 84 տոկոսը:

Նույն ընտրություններում Գորիսի ու Սիսիանի տարածաշրջաններն ընդգրկող ընտրատարածքում պատգամավորի թեկնածու (մեծամասնական ընտրակարգով) Սլեքսանդր Սարգսյանը ստացավ 20228 ձայն կամ քվեարկության մասնակիցների 60 տոկոսը (33836 վավեր ձայնից):

*Մի նկատառում եւս՝ 2007 եւ 2012 թվականների ԱԺ ընտրություններին զինվորականությունը մասնակցում էր միայն համամասնական ընտրությանը, մեծամասնական ընտրակարգում զինվորականներն անելիք չունեին:*

*2017թ. ապրիլի 2-ի ընտրություններին զինվորականությունն իրավունք ուներ քվեարկել ե՛ւ համապետական ցուցակի, ե՛ւ նույն քվեաթերթիկի ռեյտինգային ցուցակի որեւէ թեկնածուի օգտին, ինչպես մեզանից յուրաքանչյուրը:*

Վերջին հանգամանքը Սյունիքի պարագայում (հասկանալի պատճառով) շատ կարեւոր էր. ըստ մեր հաշվարկների՝ թիվ 12 ընտրատարածքում քվեարկության իրավունք է ունեցել մոտ 9.5 հազար զինվորական:

Ինքս հակված չեմ եզրակացություններ անել այդ թվերից բխող, բայց չեմ կարող չնկատել ակնհայտը՝ Սյունիքի մարզում վերջին տարիներին կառավարության իրականացրած քաղաքականությունը նվազեցրել է իշխող կուսակցության հանդեպ վստահությունը: Դրա ցայտուն վկայություններից մեկը մարզի մոտ երկու տասնյակ գյուղում ՀՀԿ-ին մերժելու իրողությունն էր: ՀՀԿ-ի հանդեպ կապանցի ընտրողների վերաբերմունքն էլ, մեղմ ասած, մտածելու տեղիք է տալիս…

* * *

2017թ. ապրիլի 2-ին Կապան քաղաքում ընտրելու իրավունք ունեցող 30790 քաղաքացուց քվեարկությանը մասնակցեց, ինչպես ասվել է, 19507 հոգի (63.35 տոկոս):

Մասնակիցներից 7839-ը կամ 40.2 տոկոսը քվեարկեց հօգուտ ՀՀԿ-ի:

Առայժմ արձանագրություններում չի երեւում այն ընտրողների քանակը, ովքեր քվեարկել են հօգուտ ՀՀԿ-ի՝ ձայն չտալով որեւէ ռեյտինգայինի:

Եվ, այդուհանդերձ, ինչպե՞ս կարելի է գնահատել Հայաստանի հանրապետական կուսակցության դիրքերը Կապան մարզկենտրոնում. դա, ի դեպ, մարզկենտրոնում հետընտրական օրերին ամենաքննարկվող հարցերից է:

Հարցի հանդեպ մեր վերաբերմունքն արտահայտելու այլ եղանակ չգտնելով՝ նպատակահարմար գտանք մի քանի համեմատություն անել:

**Համեմատություն 1**

2007թ. ԱԺ ընտրություններում (համամասնական ընտրակարգ) Կապան քաղաքը ՀՀԿ-ին տվեց 8143 քվե՝ քվեարկությանը մասնակցած 19366 ընտրողից (անվավեր քվեաթերթիկները հանած), որը կազմում է մասնակիցների 42.04 տոկոսը:

2012թ. ԱԺ ընտրություններում (համամասնական ընտրակարգ) Կապան քաղաքը ՀՀԿ-ին տվեց 8680 քվե՝ քվեարկությանը մասնակցած 20421 հոգուց (անվավեր քվեաթերթիկները հանած), որը կազմում է մասնակիցների 42.5 տոկոսը:

**Համեմատություն 2**

2007թ. ԱԺ ընտրություններում (մեծամասնական ընտրակարգ) ՀՀԿ թեկնածու Վահե Մաքսիմի Հակոբյանը Կապան քաղաքում ստացավ 14869 ձայն:

2012թ. ԱԺ ընտրություններում (մեծամասնական ընտրակարգ) պատգամավորի նույն թեկնածուն Կապան քաղաքում ստացավ 11299 ձայն՝ քվեարկությանը մասնակցած 19943 ընտրողից: Ասել է թե՝ Կապան քաղաքի ընտրողների 56.6 տոկոսը գնաց ՀՀԿ թեկնածուի հետեւից:

**Համեմատություն 3**

ՀՀԿ-ի կողմից Կապան համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրված Աշոտ Հայրապետյանը 2016թ. հոկտեմբերի 2-ի ՏԻՄ ընտրություններում ստացավ կապանցի ընտրողների 48.29 տոկոսի քվեն (8702 ձայն 18022 մասնակցից):

ՀՀԿ թեկնածու նույն Աշոտ Հայրապետյանը 2012թ. սեպտեմբերի 9-ի ՏԻՄ ընտրություններում ստացել էր 10261 քվե՝ քվեարկությանը մասնակցած 17365 հոգուց, որը կազմում է մասնակիցների 59.1 տոկոսը:

Եզրակացությունը թողնում ենք ընթերցողին:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Սյունիքը վստահեց Սերժ Սարգսյանի գլխավորած կուսակցությանը

էջ 1

Առավել բարձր վարկանիշ են արձանագրել տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված հետեւյալ անձինք`

1. Հակոբյան Վահե (ՀՀԿ)-6458 քվե (33.1 տոկոս),
2. Սիմոնյան Սերուժան («Ծառուկյան» դաշինք)-4828 քվե (24.8 տոկոս),
3. Գրիգորյան Մուրազ (ՀՀԿ)-936 քվե (4.8 տոկոս),
4. Գեւորգյան Գագիկ (ՀՅԴ)-665 քվե (3.4 տոկոս):

* * *

**Մեղրի համայնքում ապրիլի 2-ին նախապատվությունը տրվեց Միխիթար Զաքարյանին:**

Մեղրի քաղաքում քվեարկության իրավունք ունեցող 3589 քաղաքացուց ապրիլի 2-ի քվեարկությանը մասնակցեց 2540 հոգի (70.8 տոկոս):

Նրանցից 853 հոգի (33 տոկոս) քվեարկեց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի, 678 հոգի (26.7 տոկոս) Մեղրի համայնքի ղեկավար Միխիթար Զաքարյանի օգտին:

Եթե Մեղրի քաղաքում համայնքի ղեկավարը զիջել է դիրքերը, ապա Ագարակ քաղաքում քվեարկությանը մասնակցած 3402 հոգուց (78 տոկոս)` 4371 ընտրողից, 1877-ը (55.2 տոկոս) քվեարկել է Միխիթար Զաքարյանի, 574-ը (16.9 տոկոս) Աշոտ Արսենյանի, 183-ը (5.4 տոկոս)` Վահե Հակոբյանի օգտին:

Մեղրու տարածաշրջանի բոլոր գյուղերում, բացի Լիճքից, ընտրողների բացարձակ մեծամասնությունը վստահել է Միխիթար Զաքարյանին, ով թիվ 12 ընտրատարածքում ապրիլի 2-ին ստացել է 3516 քվե:

Մեղրու տարածաշրջանում 1054 հոգի վստահել է «Ծառուկյան» դաշինքին, որից 721 հոգի` պատգամավորի թեկնածու Սերուժան Սիմոնյանին:

* * *

**Քաջարան քաղաքը վստահեց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին:**

Քաջարան քաղաքում ընտրելու իրավունք ունեցող 5499 քաղաքացուց ապրիլի 2-ի քվեարկությանը մասնակցեց 4519 հոգի (82.2 տոկոսը):

Քվեարկությանը մասնակցած քաղաքացիների 79.4 տոկոսը կամ 3586 հոգի քվեարկեց հօգուտ ԱԺ պատգամավորի թեկնածու Վահե Հակոբյանի:

* * *

2017թ. ապրիլի 4-ին syuniacyerkir.am կայքը հրապարակել էր հոդված` **«Մեղրի համայնքում ապրիլի 2-ին նախապատվությունը տրվեց Միխիթար Զաքարյանին»** վերտառությամբ:

Հրապարակման մեջ տեղ էին գտել այսպիսի նախադասություններ` *ա) «Մեղրու տարածաշրջանի բոլոր գյուղերում, բացի Լիճքից, ընտրողների բացարձակ մեծամասնությունը վստահել է Միխիթար Զաքարյանին… », բ) «Եթե Մեղրի քաղաքում համայնքի ղեկավարը զիջել է դիրքերը, ապա… »:*

Երկու այս արտահայտությունը բավականին մեծ արձագանք էր գտել Մեղրի համայնքում` դրանց հավաստիությունը կասկածանքի տակ առնելով:

Լիճքի ընտրողները հեռաձայնում եւ գրում էին, որ իրենց համայնքը մոտ 70 տոկոսով քվեարկել է Միխիթար Զաքարյանի օգտին, ինչը եւ արտացոլվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ, մինչդեռ հրապարակ են հանվել միանգամայն այլ թվեր…

Նույն անհանգստությունը հայտնել էին Մեղրի քաղաքի ընտրողները:

Ելնելով վերոգրյալից` տեղյակ ենք պահել ընթերցողներին առ այն, որ 2017թ. ապրիլի 2-ի քվեարկության արդյունքներին առնչվող մեր բոլոր հրապարակումների համար իբրեւ տեղեկատվության աղբյուր օգտագործել ենք ԿԸՀ-ի հրապարակած արձանագրությունները: Մեղրի քաղաքի եւ Լիճքի պարագայում նույնպես ապավինել ենք այդ սկզբնաղբյուրին:

Մեղրի քաղաքի եւ Լիճք գյուղի ընտրողների տարակույսները փարատելու համար ճիշտ կլիներ վերահաշվարկ կատարել այդ բնակավայրերի ընտրական տեղամասերում, այլապես ոչ լեգիտիմության եւ ոչ հավաստիության ստվերն առաջիկա հինգ տարում կախված կմնա այդ բնակավայրերի քվեարկության արդյունքների վրա: Նման բովանդակությամբ նամակ ենք հղել թիվ 35 ընտրատարածքի ընտրական հանձնաժողովի նախագահ Սերգեյ Սարգսյանին:

* * *

**Գորիս քաղաքի ընտրամարաթոնում բացարձակ առաջատարն Առուշ Առուշանյանն էր:**

Գորիս քաղաքում ընտրելու իրավունք ունեցող 23333 քաղաքացուց ապրիլի 2-ի քվեարկությանը մասնակցեց 14780 հոգի (63.34 տոկոս):

Գորիսեցի ընտրողն այդ օրն անվերապահորեն վստահեց իր 25-ամյա զավակին` ՀՀԿ-ի առաջադրած պատգամավորի թեկնածու Առուշ Առուշանյանին. քվեարկողներից 3496-ը (23.7 տոկոս) քվեն տվեց հենց նրան:

Առուշ Առուշանյանի հաղթանակը միգուցե եւ այսչափ ուշագրավ չլիներ, եթե դրան նախորդած չլինեին տեղական բնույթի ինչ-որ արտառոցություններ: Մոտ քսանհինգ տարի տեղական հայրենասիրություն քարոզած անձինք փորձեցին այս անգամ էլ (անհասկանալի ինչ-որ պատճառաբանություններով) հակադրվել իրենց իսկ հռչակած, իրենց իսկ սնած այդ գաղափարախոսությանը, ինչն էլ արժանացավ մերժումի:

Գորիս քաղաքում, ըստ քվեների քանակի, երկրորդ տեղը զբաղեցրեց «Ծառուկյան» դաշինքի ներկայացուցիչ Սլավիկ Ամիրյանը (1383 ձայն կամ 9.4 տոկոս), ով մեծ վաստակ ունի Գորիսի առողջապահության բնագավառում, ինչը չէին մոռացել նրա համաքաղաքացիները:

Երրորդ հորիզոնականում արդեն Աշոտ Արսենյանն էր` 1216 քվե կամ քվեարկությանը մասնակցածների 8.22 տոկոսը: Միգուցե եւ Աշոտ Արսենյանի գորիսյան մրցապայքարն ավելի արդյունավետ լիներ, եթե թեկնածուն բարեհաճեր գոնե մեկ անգամ այցելել Գորիս, քանզի Գորիսը որքան էլ լռող, համբերող ու հանդուրժող է, բայց եւ արժանապատվության զգացում ունի մի քիչ` դեռեւս արթուն:

Չորրորդ հորիզոնականը զբաղեցրեց «Ծառուկյան» դաշինքի ներկայացուցիչ Ռոբերտ Հակոբյանը` 776 քվե կամ քվեարկությանը մասնակցածների 5.3 տոկոսը:

Առաջատարների առաջին հնգյակը եզրափակեց Վահե Հակոբյանը` 702 ձայն կամ քվեարկության մասնակիցների 4.74 տոկոսը: Սյունիքի գործող մարզպետը, անտարակույս, առավել բարձր արդյունք կունենար Գորիս քաղաքում, եթե նրա տեղական շտաբի որոշ գործիչներ իբրեւ գործելակերպ չընդունեին իրենց իսկ պաշտելի մեթոդը` բանսարկությունը:

* * *

**Սիսիանում հավասարների ճակատամարտ էր:**

Սիսիան քաղաքում ընտրելու իրավունք ունեցող 12184 քաղաքացուց ապրիլի 2-ի քվեարկությանը մասնակցեց 7773 հոգի (62.26 տոկոս):

Քաղաքում ծավալված մրցապայքարի առաջատարը Հայաստանի հանրապետական կուսակցությունից առաջադրված պատգամավորի թեկնածու Ավետ Սարգսյանն էր` 2241 քվե (28.8 տոկոս):

1755 հոգի (22.6 տոկոս) քվեարկել է հօգուտ նախկին քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի, ով ներկայացնում էր «Ծառուկյան» դաշինքը:

«Ծառուկյան» դաշինքը եւս մեկ թեկնածու ուներ Սիսիան քաղաքից` Նաիրի Բախշյան, ով համայնքի ընտրողներից 935-ի (12 տոկոս) վստահությանն արժանացավ:

Սիսիան քաղաքում 605 ձայն էլ (7.8 տոկոս) ստացավ Սյունիքի գործող մարզպետ Վահե Հակոբյանը:

318 համակիր էլ (4.1 տոկոս) Աշոտ Արսենյանն ուներ Սիսիան քաղաքում:

Ուժերի այս հարաբերակցությունը որոշ փոփոխություններով արտացոլվեց Սիսիանի տարածաշրջանի գյուղերում:

Այդ բնակավայրերում առաջատարը Վահե Հակոբյանն էր` 2098 քվե, երկրորդն Աղասի Հակոբջանյանն էր` 1921 քվե, երրորդն Ավետ Սարգսյանն էր` 1703 քվե, չորրորդը` Նաիրի Բախշյանը` 908 քվե:

Սիսիանի տարածաշրջանում որոշակի արդյունքներ են արձանագրել նաեւ ՀՅԴ-ից պատգամավորի թեկնածուներ Վարդան Գեւորգյանն ու Արտակ Սարգսյանը, ինչպես եւ Ռոբերտ Հակոբյանը «Ծառուկյան» դաշինքից:

Այսպիսով` Սիսիան քաղաքում ու մերձակա գյուղերում առավել շատ քվե է ստացել Ավետ Սարգսյանը (3944), ապա Աղասի Հակոբջանյանը` (3676), Վահե Հակոբյանը` (2703), այնուհետեւ` Նաիրի Բախշյանը (1843):

Սիսիան քաղաքում եւ տարածաշրջանում ընտրության արդյունքների վրա որոշակի ազդեցություն է ունեցել զինվորականների մասնակցությունը:

Սիսիանի տարածաշրջանում հաղթանակ ապահոված ՀՀԿ-ն մի շարք գյուղերում, այնուամենայնիվ, զիջել է «Ծառուկյան» դաշինքի թեկնածուներին` Բնունիս, Սպանդարյան, Լծեն, Իշխանասար, Մուծք, Շաքե, Որոտան, Տոլորս, Ույծ…

* * *

**Ապրիլի 2-ին Գորիսի տարածաշրջանի արդյունքների վրա վճռական ազդեցություն ունեցան այն տեղամասերի քվեները, որտեղ զինվորականներ էին քվեարկում:**

Արդեն հրապարակել ենք տեղեկություններ Ազգային ժողովի ընտրությունների օրը Գորիս քաղաքում իրականացված քվեարկության արդյունքների մասին:

Պատկերը մի փոքր այլ է Գորիսի տարածաշրջանի գյուղերում:

Գորիսի տարածաշրջանում շատ թե քիչ նկատելի էր դրական վերաբերմունքը «Ելք» դաշինքի հանդեպ:

Տարածաշրջանում եւ հատկապես Խանածախի ենթաշրջանում ակնկալվում էր «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքի հանդեպ ընդգծված դրական վերաբերմունք` հաշվի առնելով, որ Խանածախը Սեյրան Օհանյանի հայրենի գյուղն է, ով պաշտպանության նախարար աշխատած օրերում այնտեղ եւ հարեւան գյուղերում քանիցս օգտակար է եղել մարդկանց: Մինչդեռ նման բան տեղի չունեցավ. 585-ից 115 հոգի Խանածախում գնաց նրա հետեւից, 300-ից 39 հոգի` Վաղատուրում, 264-ից 18 հոգի` Խոզնավարում…

Իսկ այն տեղամասերում, որտեղ քվեարկում էին զինվորականները` արձանագրություններում պարզորոշ երեւում է, թե ինչ կողմնորոշմամբ կամ ուղղորդումով էին ընտրության եկել նրանք: Անշուշտ, դա խոսակցության այլ նյութ է, բայց մի խորհուրդ որոշ թեկնածուների չենք կարող չտալ. այն պահին, երբ խոսում եք ժողովրդի` ձեր հանդեպ ունեցած սիրո եւ վստահության մասին, մի փոքր կարմրեք եւ հիշեք, որ ձեզ ձայներ են նվիրել, ընդ որում` չունեցած վաստակի համար:

Ինչեւէ, Գորիսի տարածաշրջանի բոլոր գյուղերի արձանագրությունները համադրելիս ակնհայտ են դառնում հետեւյալ տեղեկությունները:

Տարածաշրջանի գյուղերում առավել շատ ձայն է ստացել Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը (3094): Այնուհետեւ` Առուշ Առուշանյան (2799), Աշոտ Արսենյան (1261), Սլավիկ Ամիրյան (2009), Ռոբերտ Հակոբյան (1915): Գորիսի տարածաշրջանում որոշակի ձայներ են հավաքել նաեւ «Ծառուկյան» դաշինքի ներկայացուցիչ Սերուժան Սիմոնյանը, ՀՅԴ թեկնածուները, ՀՀԿ թեկնածու Ավետ Սարգսյանը (վերջինս, օրինակ, 119 ընտրող ունեցող Արավուս գյուղում (մնացյալը` զինվորական) ստացել է 326 ձայն):

Եվ եթե ընդհանրացնենք Գորիս քաղաքի ու տարածաշրջանի գյուղերի արդյունքները, ապա կունենանք հետեւյալ պատկերը` Առուշ Առուշանյան` 6295 քվե, Վահե Հակոբյան` 3796 քվե, Աշոտ Արսենյան` 2477 քվե, Սլավիկ Ամիրյան` 2009 քվե, Ռոբերտ Հակոբյան` 1915 քվե:

Հայաստանի հանրապետական կուսակցության ակնհայտ հաղթանակի պարագայում, սակայն, մի շարք գյուղեր մերժել են ՀՀԿ-ի թեկնածուներին:

Գորիսի տարածաշրջանում, ինչպես եւ Գորիս քաղաքում, անթաքույց մրցակցություն էր Սյունիքի գործող մարզպետ Վահե Հակոբյանի եւ մեկ ուրիշ ՀՀԿ-ական Աշոտ Արսենյանի միջեւ (վերջինս` Սյունիքի նախորդ մարզպետի աջակցությամբ):

Վահե Հակոբյանը հաղթեց գյուղերի մեծ մասում, բայց Աշոտ Արսենյանն էլ մրցակցին գերազանցեց Վերիշեն, Քարահունջ, Հարթաշեն, Որոտան, Շուռնուխ, Բարձրավան գյուղերում:

Իսկ առհասարակ գործող մարզպետը մերժվեց տարածաշրջանի մի քանի գյուղերում` Վերիշեն, Ակներ, Քարահունջ, Խնձորեսկ, Հարթաշեն, Որոտան, Շուռնուխ, Բարձրավան, Տեղ, Քարաշեն, Արավուս, Հարժիս, Վաղատուր…

* * *

**Կապանի տարածաշրջանի գյուղերում եւս զինվորականների ազդեցությունը վճռորոշ էր:**

Եվ այդ ամենն այնքան տեսանելի ու չափելի է, որ աչքի է զարնվում` տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններին թեթեւակի ծանոթանալիս անգամ…

Բայց զինվորականների գործելակերպի հարցը, ինչպես ասել ենք, ավելի պատշաճ ժամանակի խոսակցության թեմա է:

Մնում է արձանագրել, որ Կապանի տարածաշրջանի գյուղերում քվեների ամենաբարձր նիշը նվաճեց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը (3272 ձայն):

«Ծառուկյան» դաշինքի ներկայացուցիչ Սերուժան Սիմոնյանը տարածաշրջանի գյուղերում ստացավ 727 հոգու վստահությունը, որից 186-ը` Սյունիք գյուղում:

Այդ համայնքն առատաձեռն գտնվեց նաեւ ՀՅԴ թեկնածու Գագիկ Գեւորգյանի հանդեպ` 162 ձայն (վերջինս Կապանի գյուղերում ստացավ 436 ձայն):

Չորրորդ հորիզոնականը զբաղեցրեց պատգամավորի թեկնածու Մուրազ Գրիգորյանը` 344 ձայն: Իմիջիայլոց, Մուրազ Գրիգորյան թեկնածուի ֆենոմենը, ավելի ստույգ` նախընտրական քարոզի օրերի պահվածքը վերծանումի եւ ստուգաբանումի լուրջ կարիք ունի, քանզի անօրինակ ու աննախադեպ էր:

Համեմատած այլ տարածաշրջանների` ավելի դրական էր վերաբերմունքը «Ելք»-ի հանդեպ` 173 ձայն. այդ դաշինքը 600-ից ավելի քվե ստացել էր Կապան քաղաքում:

«Ելք»-ից մի քիչ ավելի ձայն էր ստացել «Հայկական վերածնունդ» կուսակցությունը` 196 քվե: Վերջինիս դիրքերը համեմատաբար ամուր էին մարզկենտրոնում (846 ձայն), թեեւ հորիզոնում տեսանելի էր նրա դալկացած ուրվականի խամրումը:

Ընդհանրապես Կապան քաղաքում եւ մերձակա գյուղերում քաղաքական ուժերի կշռի փոփոխության նոր դրսեւորումների ականատես եղանք այս օրերին:

ՀՀԿ-ն մարզկենտրոնում ստացավ քվեարկության մասնակիցների 40.2 տոկոսը, որն ամենացածր նիշն է (այդ կուսակցության համար) 2002-ի ԱԺ ընտրություններից ի վեր: Նահանջի ընթացքը միգուցե եւ անցներ ռուբիկոնը, եթե Սերժ Սարգսյանը քարոզարշավի եզրափակիչ փուլում չայցելեր Կապան եւ մի ամբողջ օր չաշխատեր նախընտրական շտաբում:

ԲՀԿ-ն, որ հանդես եկավ «Ծառուկյան» դաշինքի կազմում, 2012թ. ԱԺ ընտրություններում (համամասնական ընտրակարգով) Կապան քաղաքում ստացել էր 6571 ձայն, իսկ ս.թ. ապրիլի 2-ին (ամբողջ դաշինքով)` 5667 ձայն:

ՀՅԴ-ն 2012-ի ԱԺ ընտրություններում (համամասնական ընտրակարգով) Կապան քաղաքում ստացել էր 1679, իսկ վերջին ընտրություններում` 1439 ձայն (այդ կուսակցությունը 2007-ի խորհրդարանական ընտրություններում մարզկենտրոնում ստացել էր 3670 ձայն):

«Օրինաց երկիր» կուսակցությունը 2012-ի նշված ընտրության ժամանակ Կապանում ստացել էր 1284 ձայն, իսկ նրա իրավահաջորդ «Հայկական վերածնունդ»-ն ապրիլի 2-ին ստացավ 846 ձայն:

Մի քանի կուսակցություն էլ ընդհանրապես մերժվեցին կապանյան մարաթոնում:

Այո, Կապանում նույնպես, ինչպես ամենուր, ցայտուն կերպով գործում է դիալեկտիկայի (գիտություն բնության, հասարակության եւ մտածողության զարգացման առավել ընդհանուր օրենքների մասին) տրամաբանությունը: Եվ դա, անկախ մեր ցանկությունից, նժարի մի կողմում դնում է հանրային պահանջը, մյուս կողմում` ամեն մի կուսակցության, յուրաքանչյուր քաղաքական գործչի վարքը, խոսքն ու գործը:

Ապրիլի 2-ի ընտրություննն այդ ամենը նժարելու, չափելու եղանակներից մեկն էր միայն…

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Իսկապե՞ս պետք չէ հիվանդանոցի բուժանձնակազմին «շնորհակալություն» հայտնել

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**80-ական թվականներին ականատես եմ եղել առաջին հայացքից զավեշտալի, բայց ներքին մեծ փխրություն պարունակող մի դեպքի: Ժամադրվել էի ընկերոջս հետ եւ սպասում էի նրան ոչ անհայտ Լենինի անունը կրող պողոտայի փակ շուկային հարող մայթին: Այն տարիներին մեր հանրապետություն արտասահմանից այցելուներն այնքան շատ չէին, ինչպես մեր օրերում է, եւ նրանց նկատելը, հասկանալի է, դժվար չէր, մանավանդ որ իրենց հագուստ-կապուստով խիստ տարբերվում էին տեղացիներից: Նրանցից շատերի հագուստն ուղղակի նման էր ցնցոտիների: Ասում էինք՝ նրանք պրակտիկ են հագնվում:**

Հայացքս դիմացի մայթին էր, որտեղից սպասում էի ընկերոջս: Նկատեցի, թե ինչպես «պրակտիկ» հագնված մի զույգ՝ աղջիկ ու տղա, մաղախ հիշեցնող ուսապարկերով, ձեռք-ձեռքի տված մայթից անցան մայրուղի: Նրանք կարծես ոչ թե ցանկանում էին հատել մեր գլխավոր քաղաքի գլխավոր մայրուղին, այլ ուղղակի զբոսնում էին պողոտայով ընթացող ավտոմեքենաների շարքերում: Երբ նրանք հատեցին փողոցը երկու մասի բաժանող լուսային բաժանարարը, նրանց ընդառաջ վազեց լավ հագնված մի երիտասարդ՝ միաժամանակ ձախ ձեռքով նշաններ անելով վարորդներին, կարծես նրանցից ներողություն խնդրելով: Հասավ նրանց, բռնեց տղայի օձիքից եւ սկսեց գոռգոռալով ինչ-որ բան ասել, բացատրել: Մեկ-երկու րոպե անց եռյակին միացավ միլիցիայի սերժանտը: Խումբը սկսեց մոտենալ մայթին: Իհարկե, չէի մոռացել, որ սպասում եմ ընկերոջս, բայց նաեւ ցանկանում էի իմանալ, թե գոռգոռացող երիտասարդն ինչ էր բացատրում օտարերկրացիներին: Մոտեցա, ինձ նման հետաքրքրասերները մեկ տասնյակից ավելի էին: Միլիցիայի սերժանտը հայրենասիրության դաս էր տալիս երիտասարդ մարդուն, ում ինքնասիրությունը վիրավորվել էր՝ տեսնելով, թե ինչպես են իր մայրաքաղաքի հետ վարվում նրան հյուր եկած օտարերկրացիները:

Օրենքի պաշտպանն օրինազանցներին բաց թողել, դրա պաշտպանողի գլխին քարոզ էր կարդում:

Ինչու էր այդպես...

Ջեյթունի հանրակացարանների մոտից հվանդանոց եմ գնում, ծանր հիվանդ ունենք: Ինձ հետ միկրոավտոբուս է բարձրանում երեք գեղեցկադեմ աղջիկ եւս: Դիմագծերից ենթադրում եմ, որ եվրոպական երկրներից են: Այնպես է ստացվում, որ նստում են իրարից հեռու: Նստելուն պես շարունակում են հավանաբար կիսատ մնացած զրույցը մայրենիով՝ այն էլ շատ բարձր տոնով: Հասկանալի է, իմ ուշքն ու միտքը հիվանդիս հետ է, բայց դրա հետ մեկտեղ սրանց վարվելաձեւը խորհել է տալիս: Եթե այս աղջիկներն ուսանելու են եկել Հայաստան, նշանակում է՝ մեր երկիրը նրանց հայրենիքին գերազանցում է գոնե կրթական մակարդակով, բայց հավանաբար ոչ միայն դրանով, իսկ սրանք իրենց պահում են այնպես, կարծես ավտոբուսում միայն երեքով են, ուրիշ մարդ չկա:

Դիպվածն ինձ հիշեցրեց այսօր արդեն Մաշտոցի անունը կրող պողոտայում տասնյակ տարիներ առաջ տեղի ունեցածը:

Նույնքան բարձր տոնով, ինչպես աղջիկներն էին խոսում, դիմում եմ ոչ թե նրանց, այլ կողքիս նստած տղամարդուն.

- Տեսնես իրենց երկրում սրանք իրենց այսպե՞ս կպահեն, կամ էլ կընդունե՞ն, որ օտարներն իրենց երկրում նման ձեւով հանդես գան:

Հարեւանս միայն ուսերը թոթվեց՝ ասել է թե՝ ինձ չի վերաբերվում:

Օտարերկրացի գեղեցկուհիների տհաճ շաղակրատանքի վերջը չէր երեւում: Ինձանից հետ նստած մի կին ձեռքը երկարեց նստատեղիս վրայով եւ բռնեց ինձանից առաջ նստած աղջկա ուսը, երեւի լավ էլ սեղմեց ու ասաց.

– Ձեզ կարգին պահեք:

Հասկացան ու սսկվեցին: Ես մենակ չէի: Քիչ էր մնում այդ ձեռքը համբուրեմ:

Ինչու է այսպես...

Ֆրանցիսկոս պապն ասում է՝ պետք է կարողանալ հագնել ուրիշի կոշիկը, ու պարզաբանում՝ հագնել ուրիշի կոշիկը, նշանակում է զգալ այն ամբողջ տառապանքը, որ ապրել կամ ապրում է դրա տերը:

Այս բազմահարկ ու բազմապրոֆիլ հիվանդանոցի հարյուրավոր հիվանդներ յուրաքանչյուր օր հազարավոր այցելուներ են ունենում: Հիվանդանոցի շենքի ներսում մարդկային միանգամայն այլ հարաբերություններ, այլ բարքեր են, որոնք դրսի իրական կյանքի հետ կարծես ոչ մի կապ չունեն: Ոչ մի տեղ քեզ հրամայող կոչեր չկան՝ պահպանիր մաքրություն, բարձր չխոսել, չծխել, չաղմկել եւ այլն: Այստեղ յոլա են գնում առանց նման հուշումների: Յուրաքանչյուրի դեմքի վրա իրենց ցավն է, մի քիչ էլ՝ ուրիշինը: Մի քանի օր գնալ-գալուց հետո շատերն իրար դեմքով ճանաչում են, երբեմն էլ բարեւ են տալիս ու առնում: Իսկ երբ իրենց ցավը մի քիչ մեղմանում է՝ նաեւ հարցնում են դիմացինի հիվանդի վիճակից: Այստեղ կարողանում են հագնել ուրիշի կոշիկը ու եթե չեն էլ տանում դրա տիրոջ տառապանքի ամբողջ ծանրությունը, ապա գոնե զգում են այդ տառապանքի ցավը:

Դա մխիթարություն է, մեծ մխիթարություն…

Իսկ շենքի մուտքի լայն աստիճանավանդակից մի քանի քայլ այն կողմ իրար կպած հարյուրավոր ավտոմեքենաները, դար ու փոսերով, կարկատաններով ասֆալտապատ փողոցն ու մարդկանց գոռումգոչյունն է հիշեցնում, որ գտնվում ես ոչ թե միջնադարում, այլ 21-րդ դարի Երեւանում:

Ինչո՞ւ է այսպես:

Հիվանդին ընդունելուց հետո հարազատների հետ որոշ բացատրական աշխատանք են տանում հիվանդանոցի ներքին կարգ ու կանոնին վերաբերվող հարցերի շուրջ, մասնավորապես զգուշացնում են, որպեսզի բուժանձնակազմին, ծառայություններ մատուցողներին «շնորհակալություն» չհայտնենք, նրանք կատարում են իրենց աշխատանքը: Վերջում էլ զգուշացնում են, որ տեսախցիկներն ամեն ինչ ֆիքսում են: Եթե չենք ցանկանում, որ նրանք աշխատանքից ազատվեն, ավելի լավ կլինի ձեռնպահ մնալ նման փորձերից: Ամեն ինչ պարզ էր ու հասկանալի: Նման բարձր անունով ու բարձրակարգ հիվանդանոցին նմանատիպ երեւույթներն անհարիր են:

Մեր հիվանդին երրորդ օրը վերակենդանացման բաժնից տեղափոխեցին սովորական հիվանդասենյակ: Նա ոչ միայն քայլել, այլ նստել անգամ չէր կարողանում, իսկ խոսում էր դժվարությամբ:

Գիշերանոթի կարիք ուներ: Հայտնեցի հերթապահ քույրին:

- Թող սպասի, մաքրուհիները հինգ րոպեից կմոտենան (համաձայնեք, որ «թող սպասեն» հիմար ձեւակերպում է որեւէ շարժում կատարելու ոչ ունակ մարդու պարագայում): Հիվանդի հետ հինգ րոպեի փոխարեն 10 րոպե սպասելուց հետո նորից դիմեցի հերթապահ քույրին: Այս անգամ նա բարձր ձայնով, անուններ տալով կանչեց մաքրուհիներին: Եվս 10-15 րոպե, եւ հայտնվեցին նրանք ու իսկույն էլ ինձ հասկացրին, որ բաժնում միայն մեր հիվանդը չէ, նրա նման շատերը կան: Ճիշտն ասած՝ դա ինձ հիշեցնել պետք չէր, ես դա գիտեի:

Գիշերանոթով մաքրուհին բարձրացրեց հիվանդի վերմակը եւ կարծես առաջին անգամ էր նման բան տեսնում՝ բայց նա արդեն արել ա… Մի խոսքով՝ այդ տանջալից օրվա ավարտին հարեւան հիվանդի խնամողն ինձ բարի խորհուրդ տվեց՝ հենց առավոտ կանուխ՝ «շնորհակալություն» հայտնիր մաքրուհիներին: Բա տեսախցիկնե՞րը: Դրանք միայն միջանցքներում են: Երեւում է, փորձ ունի:

Հաջորդ առավոտյան հերթապահող մաքրուհիներից մեկին կանչեցի հիվանդասենյակ: Նախապես մտածել էի որտեղ հայտնել «շնորհակալությունը»՝ լվացարան-լոգարանում, զգուշությունը լավ բան է: Այդ ամբողջ ընթացքում աչքիս առաջ Միհեր Մկրտչյանի մարմնավորած հերոսն էր, որ ինստիտուտի ընդունելության քննության համար կաշառք տալու նպատակով դասախոսին քաղաքի կենտրոնից հետիոտն հասցնում է Մոնումենտ, բայց այդպես էլ չի կարողանում դա անել…

Կեսօրին մոտ հիվանդս մաքրուհիների օգնության կարիքն ունեցավ: Եկան: Նրանցից մեկը, որին առաջին անգամ էի տեսնում, ձեռքով ուժեղ խփեց սեղանին եւ համարյա գոռալով ասաց՝ մենք պատրաստ ենք (ինչի՞ն էին պատրաստ, ինչ էր ուզում ասել, չեմ հասկանում): Օգնության հասավ ընկերուհին. «Նա հազար դրամ է տվել»:

- Շատ էլ լավ է արել, - արձագանքեց շեֆը, եւ գործի անցան:

Դրանից հետո երկու շաբաթ էլ մնացինք հիվանդանոցում: Օրական հազար դրամը զգալիորեն թեթեւացնում էր հոգսս:

Ինչո՞ւ է այսպես:

Մեր հարեւանին դուրս են գրում, բուժումը պետք է տանը շարունակի: Դեղամիջոցները հիմնականում կաթիլային եղանակով է ստանում: Խնդրում է մինչեւ դուրս գրվելը վերջին նշանակումը հիվանդանոցում՝ բուժաշխատողների հսկողությամբ ստանա: Ասում են՝ չէ, տանը կստանաս: Կոտրած գթալի պես ես մեջ եմ ընկնում՝ բայց տանը նա կարող է այդ հնարավորությունները չունենալ: Պատասխանում են՝ հայ չի՞, մի բան կմտածի...

Ես դեռ չգիտեի, որ այդ կոտրած տաշտակի առաջ ես էլ եմ կանգնելու:

Ինչո՞ւ է այսպես...

---

¶ñ³Ï³Ý ëÛáõÝÇù

## Լեւոն Սահակյան



**Լեւոն Սահակյան. ծնվել է 1955թ. հունվարի 26-ին Սյունիքի մարզի Ակներ (Բռուն) գյուղում: Ծառայել է խորհրդային բանակում: Ունի բարձրագույն տնտեսագիտական եւ միջնակարգ շինարարական կրթություն: Ստեղծագործում է տասներեք տարեկանից: 1992 թվականից երկրապահների միության անդամ է: Ինը գրքի հեղինակ է, ՀԳՄ անդամ:**

### Ծննդյան օր

*Իմ ծննդյան օրն է այսօր,*
*Ու խորհում եմ տխրամած,*
*Մերթ անդուր է, մերթ մտերիմ*
*Տխրությունն այս քմահաճ:*

*Վերհիշում եմ անցած ուղիս,*
*Հին օրերը անմոռաց,*
*Տարիներս՝ գորշ ու գունեղ,*
*Արեւոտ ու ամպամած:*

*Որքան բան եմ տեսել կյանքում՝*
*Առեղծական, ակնհայտ*
*Եվ մնացել իմ հավատին*
*Նվիրյալ ու հարազատ:*

*Տեսել եմ մութ, լուսե հրաշք,*
*Կույս բարձունքներ նվաճել,*
*Ծառացել եմ հանուն մարդու,*
*Խղճի կամոք նահանջել:*

*Սիրել, սիրվել, զոհացել եմ*
*Տեր-Աստծո տվածով,*
*Բարին է ինձ առաջնորդել,*
*Հանց համակիր մերձավոր:*

*Չէ՛, ապրել եմ կարծես պատրվով,*
*Ամաչելու տեղ չունեմ,*
*Գինի լցրեք, բարեկամներ*
*Էլ տխրելու միտք չունեմ:*

*Ուրախանանք ողջանվեր,*
*Թող մեր քեֆը ծովանա...*
*Գո՞հ եմ, մա՛յրս, որ չես ծնել*
*Մի ազգուրաց ավարա:*

### Արարատը

*Արարատը փարոսն է մեր՝*
*Բարձր, ազդու եւ քաղցրաչ,*
*Բոսորի տեղ՝ ճերմակ բոցով,*
*Արարատը՝ լռին կանչ:*

*Արարատը՝ մոտ ու հեռու*
*Հայահավաք վեհ պաճար,*
*Արարատը՝ երկիր իջած*
*Յուրահատուկ առաքյալ:*

*Երկրի կենտրոն, հայի առանցք*
*Ու մարդկության մեծ փրկիչ,*
*Սեւ եղեռնի ազո վկա*
*Եվ բողոքի արդար ճիչ...*

### Հմայված եմ

*Ու չոքում եմ ես կրկին*
*Ձեր ծնկների առաջ,*
*Մի սուրբ աղոթք է հնչում,*
*Մի հոգեծին հառաչ:*

*Հմայված եմ, օ՛, տիկի՛ն,*
*Դուք կրակ եք ու բոց,*
*Դուք՝ գրավված շատ անգամ,*
*Դուք՝ անառիկ ամրոց:*

*Ձեր ժպիտը հեւրամուտ*
*Ինձ կանչում է համառ,*
*Օ՛, որքա՛ն եք ցանկալի*
*Եվ ինչքա՛ն եք վարար...*

### Ձմեռ

*Ձյան տակ կքած տանիքի վրա*
*Ծուխն է էսքիզներ անում եռանդուն,*
*Փաթիլը նազով պարում է ասես,*
*Վստահ, որ ունի իր երկրպագուն:*

*Վառարանի մոտ եւ պատուհանի,*
*Նստել, ճերմակն եմ շոյում հայացքով,*
*Ճարճատող փայտը մեռնում է մարմանդ,*
*Հեռվում ննջում է անտառն անխռով:*

*Ամեն ինչ՝ առկա, ամեն բան՝ երազ,*
*Կարճ երջանկություն, տեւական մորմոք,*
*Կրկին ճռռում է ճախարակը հին,*
*Եվ ժամանակը նիրհում է անհոգ...*

# ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. «Չեմ կարող կեցվածք ընդունել, թե շրջակա միջավայրին ոչինչ չի սպառնում»

Հարցազրույց ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդան Գեւորգյանի հետ

**– Պարոն Գեւորգյան, քանի որ առաջին անգամ ենք անդրադառնում «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի գործունեությանը, նախ կխնդրեինք ներկայացնել, թե ինչ է այն իրենից ներկայացնում, երբ է ստեղծվել, նրա կառուցվածքը, նպատակները:**

– «Զանգեզուր» կենսոլորտային համալիրը ստեղծվել է 2013 թվականին՝ միավորելով տարբեր պահպանման ռեժիմներ ունեցող հատուկ պահպանվող տարածքներ՝ «Շիկահող» պետական արգելոցը, «Արեւիկ» ազգային պարկը, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուստուփ», «Բողաքար» եւ «Սեւ լիճ» պետական արգելավայրերը:

2016-ի սեպտեմբերին կառավարությունն ընդունեց որոշում «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի կառուցվածքային փոփոխության մասին՝ այն հիմնավորելով աշխատանքի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությամբ: Փոփոխման արդյունքում կազմակերպությունն ունի երեք մասնաճյուղ՝ Շիկահողի մասնաճյուղ, որն ընդգրկում է երեք տեղամաս՝ «Շիկահող» պետական արգելոցը, «Սոսու պուրակ» եւ «Խուստուփ» պետական արգելավայրերը, «Արեւիք» մասնաճյուղ, որ ներառում է երկու տեղամաս՝ «Արեւիք» ազգային պարկը եւ «Բողաքար» պետական արգելավայրը, «Զանգեզուր» մասնաճյուղ, որ ներառում է «Զանգեզուր» եւ «Սեւ լիճ» պետական արգելավայրերը: Անցած տարվա դեկտեմբերի 15-ին մասնաճյուղերի միավորման գործընթացն ավարտին հասավ:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիրի գործունեության նպատակը նրա մասնաճյուղերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային եւ կենսաբանական բազմազանության պահպանությունը, վերարտադրությունն է, ինչպես նաեւ ազգային պարկի բնական պաշարների կայուն օգտագործումը: Պիտի ասեմ, որ կանոնադրությամբ շատ բան է նախատեսված, եթե կանոնադրական բոլոր կետերը կյանքի կոչվեն, լուրջ բան կստացվի: Բայց դրան հասնելու համար դու պիտի բնությունը սիրես: Երբ ընդունվեցի աշխատանքի, փորձեցի բոլորին հանդիպել, եղա բոլոր տեղամասերում եւ ի՞նչն ամենից առաջ փոխանցեցի՝ հարգելիներս, ես այս բնությունը սիրում եմ, կարծում եմ՝ դուք էլ եք սիրում: Այս հիմնարկի գործառույթները սրանք են: Եթե որոշ բաներ ժամանակին ձեզ լավ չեն բացատրել կամ ճիշտ ուղղություն չեն տվել, հիմա ձեզ ասում եմ, ով իմ կողքին կանգնի, նրա հետ խնդիր չունեմ: Ես ոչ մի բան չեմ անձնավորում:

**– Այնուամենայնիվ, ո՞րն է ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ասվածի խնդիրը, ինչո՞վ է այն տարբերվում անտառտնտեսությունից, բնապահպանական տեսչությունից եւ այլն:**

– Մեր գործունեությունը բնության պահպանվող տարածքներին է առնչվում: «Հայանտառ» ՊՈԱԿ-ն իրեն ենթակա տարածքում իրականացնում է անտառների պահպանություն եւ անտառօգտագործում: Մենք իրականացնում ենք անտառների պահպանություն եւ վերարտադրություն, տնկարան ունենք: Մեր առջեւ խնդիր է դրված, ես կասեի՝ չափազանց կարեւոր խնդիր, զարգացնել էկոտուրիզմը:

**– Ի դեպ, հիմնարկի կանոնադրությամբ ձեռնարկատիրական գործունեության լայն շրջանակ է նախատեսված:**

– Այդ ուղղությամբ ծրագրեր ունենք իրականացնելու: «Զանգեզուր» կենսոլորտային համալիրը մոտ 80 հազար հեկտար տարածք ունի: Մտածում ենք ձեռնարկատիրությունը զարգացնել երեք ուղղությամբ. Նախ՝ մեղվաբուծությանը զարկ տալ՝ Գեղվա ձորում, Խուստուփի լանջին փեթակներ տեղադրել: Երկրորդը՝ զբաղվել ձկնաբուծությամբ, կարծում եմ՝ դա կարելի է ձեռնարկել Բասուտա գետում եւ Սեւ լճում: «Արեւիք» ազգային պարկում, որքանով տեղյակ եմ, նռան այգիներ կան, ընդհանրապես Մեղրիում նպաստավոր պայմաններ կան պտղի արտադրությամբ զբաղվելու համար, նաեւ կարելի է հյութի արտադրության մի հոսքագիծ գործարկել: Ամենակարեւորը՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքը հարուստ է դեղաբույսերով, կարելի է լրջորեն մտածել եւ Աստծո տված այդ պարգեւը հավաքել ու ծառայեցնել ժողովրդին:

Ես միշտ կրկնում եմ միտքը, որ ինձ խորհուրդ մի տվեք, ինձ հնարավորություն տվեք Խուստուփում մի նորմալ տուրիստական բազա ստեղծել, վրանային բազա: Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված է, որ մենք ձեռնարկատիրական գործունեությամբ պիտի զբաղվենք, բա հո բազմոցի վրա չպիտի՞ պառկեմ, պիտի հիմնարկի համար փող բերեմ: Մեծ պլաններ ունեմ զբոսաշրջության հետ կապված: Շիկահողում ունենք այցելուների կենտրոն, որտեղ ութ զբոսաշրջիկ ընդունելու հնարավորություն կա: Կարծում եմ՝ դա քիչ է, այդ թիվը պիտի հասցնել 25-ի, որ կարողանանք զբոսաշրջիկների մի խումբ հյուրընկալել: Մի փոքր բազա էլ սոսիների պուրակում եմ որոշել ստեղծել:

**– Որքան հասկացա, այդ ամենն էկոտուրիզմի զարգացմանն է միտված, ի՞նչ հեռանկարներ կան:**

– Ասեմ, որ էկոտուրիզմը զարգացնելու գործին պինդ եմ կպել: Բայց, նախեւառաջ, պիտի մտածել պայմաններ ստեղծելու մասին: Տուրիստը նա չէ, որ Ծաղկաձորի շքեղ հյուրանոցում բազմոցի վրա նստած ողջ օրն անցկացնի: Մենք հրաշալի բնություն ունենք, անկրկնելի վայրեր, բայց եթե դրանք անհասանելի են, պայմաններ չկան զբոսնելու, ի՞նչ օգուտ: Սոսիների պուրակում անցած աշնանը՝ հոկտեմբերին, տեղացած աննախադեպ ձյունից ծառերի ճյուղերը ջարդվել էին, բարձիթողի վիճակ էր, եթե տուրիստն արշավի է դուրս եկել, արահետներով քայլելիս նրա ոտքը ոչնչի չպիտի դիպչի, խոսքը Սոսիների պուրակի մասին է, որտեղ պիտի ցուցանակներ լինեն, բնափայտով պատրաստված նստարաններ: Մարդիկ կլինեն, ովքեր ձիով շրջելու ցանկություն կունենան. ութ ձի ունենք, ուղեկցողներ էլ կան: Մտադիր ենք հինգ լեռնային հեծանիվ ձեռք բերել: Պիտի նախ՝ ապրանք ստեղծես, հետո՝ մտածես այն վաճառելու մասին: Մեր ապրանքն էլ զբոսաշրջիկի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Այն էլ ասեմ, որ կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ամենակարեւոր ուղղությունն էկոտուրիզմն եմ համարում, ինչպես քիչ առաջ նշեցի, շատ կարեւոր բնագավառ է ե՛ւ երկիրը ճանաչելի դարձնելու, ե՛ւ ֆինանսներ հայթայթելու առումներով: Ցավոք, այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն արվել:

**– Մասնաճյուղերի միավորումով կրճատումներ եղա՞ն, թե՞ աշխատակազմը մնացել է նույնը:**

– Բնականաբար, յոթ մասնաճյուղի տնօրեններից չորսը կրճատվեց: Ընդհանուր աշխատողների թիվը 110 էր, մոտ տասը հոգի կրճատվել է: Աշխատանքի են ընդունվել տեսուչներ, ովքեր տվյալ տարածքից են, այդտեղ են բնակվում, այլ ոչ թե Կապանում նստած՝ հսկում են, թե ինչ է կատարվում Քիրսում, Քյուրուտում:

**– Կայացման դժվարին գործընթացի մեջ եք, ինչ՞ ժառանգություն եք ստացել, ի՞նչ հիմնախնդիրներ ու պրոբլեմներ ունեք:**

– Ճշմարիտն ասած՝ բնավորությունս այնպիսին է, որ մանրուքների մեջ շատ չեմ մտնում, փորձում եմ հասկանալ հիմնախնդիրը, վեր հանել եւ շտկելով առաջ գնալ: Հիմա մի երկուսի մասին ասեմ. մի մարդ չկա՞ր այստեղ բնությունը սիրող, որ տնօրեն նշանակեին: Նախկինը մայրաքաղաքից էր, գնում-գալիս էր, կարծում եմ՝ բացթողումները դրանով են պայմանավորված:

Պետբյուջեով մեզ հատկացնում են գումար, որ բավարարում է միայն աշխատավարձի եւ կոմունալ վարձերը վճարելու համար, վերջինս տարեկան կտրվածքով կազմում է 1,4 մլն դրամ, որը շատ քիչ է, մանավանդ ունենք երեք մասնաճյուղ: Մեր հիմնարկում ամենագլոբալ խնդիրն աշխատավարձն է, որը շատ ցածր է: Պիտի աշխատավարձը նորմալ լինի, որ մարդկանց առաջ պահանջներ դնես:

**– Անտառային հրդեհների դեպքում ինչպե՞ս եք գործում: Տեսնում ենք, թե աշխարհի տարբեր կետերում բնական այդ չարիքն ինչ ավերածություններ է գործում, երաշտ տարիներին մեր անտառներում էլ են հրդեհներ բռնկվում:՛ Բավարար տեխնիկա կա՞ հրդեհաշիջման նպատակով. երբեմն հրդեհը դժվարամատչելի տարածքներում է բռնկվում, մարելը դժվար է լինում, ինչպես մի քանի տարի առաջ եղավ Մեղրիում:**

– Հրդեհ լինելու դեպքում անմիջապես զանգահարում ենք արտակարգ իրավիճակների վարչություն, այնուհետեւ տեղյակ պահում բնապահպանության նախարարությանը, հետո մեր ուժերով սկսում ենք կրակի մարման գործը մինչեւ արտակարգ իրավիճակների ծառայության աշխատակիցները կանգնում են մեր կողքին: Ինչ վերաբերում է Մեղրուն, ապա անհրաժեշտ են ամենագնացներ՝ «Պիկապ» տիպի, որում կարելի լիներ ջրով լի տարաներ տեղավորել:

**– Կուզեինք ներկայացնել «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» նախագիծը, որ միտված է Սյունիքում գտնվող յոթ պահպանվող տարածքների բնական պաշարների պահպանությանը եւ այդ տարածքների կառավարման բարելավմանը: Սա ընդհանուր գծերով, կխնդրեինք ծրագրի մասին քիչ ավելի մանրամասն:**

– Դա շատ լուրջ ծրագիր է, իրականություն դառնալու դեպքում շոշափելի առաջընթաց կապրի մեր կազմակերպությունը: Ծրագրով նախ՝ կլուծվի վարչական շենքի հարցը, դա զուտ վարչական շենք չի լինի, այլ այցելուների կենտրոն: Պիտի քաղաքի կենտրոնում առանձին շենք լինի, երկհարկանի, նաեւ մի հարկաբաժինը կլինի թանգարան, որ մեր քաղաք այցելողը ծանոթանա մեր բնությանը, կենցաղին: Դա ծրագրով նախատեսված կետերից առաջնայինն է, ծրագրի պատասխանատուների հետ զանազան տարբերակներ ենք փնտրում:

Երկրորդ՝ մեր կազմակերպության դժվարագույն հարցերից մեկը եղել է չճշտված: «Հայանտառի» տարածք, պահպանվող տարածք, համայնքին պատկանող տարածք… Մի ծառ է հատվում՝ «իմ տարածքում չէ՝ այլ քո» կարգի խոսակցություններ են ծայր առնում: Հստակ սահմանազատում չկա: Բայց այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում եւ, կարծեք, թունելի վերջում լույս է երեւում:

Երրորդ, այն, ինչ նպաստում է հիմնարկի բնականոն գործունեությանը, ծրագիրը հատկացնում է: Կարծում եմ, որ հիմնարկին անհրաժեշտ է երեք ամենագնաց՝ դժվարմատչելի վայրեր հասնելու եւ հրդեհը մարելու համար:

Չորրորդ, ծրագիրը նախատեսում է վերապատրաստումներ եւ փորձի փոխանակում, նաեւ միջազգային մակարդակի:

Ասվածին հավելեմ, որ «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» նախագիծն իրականացվում է ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ ՀՀ միջեւ կնքված միջկառավարական համաձայնագրի, ինչպես նաեւ Գերմանական վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) եւ ՀՀ բնապահպանության նախարարության միջեւ ստորագրված համաձայնագրի:

**– Մեր զրույցում հիմնականում անդրադարձանք բուսական աշխարհին, բայց կենդանական աշխարհն էլ մեր աչքի առաջ, բոլորիս թողտվությամբ ոչնչանում է, անդրադառնանք որսագողությանը:**

– Որ որս արվում է, բոլորս գիտենք: Ի սկզբանե նշեցի, որ տարբեր պատկանելության տարածքներ կան՝ «Հայանտառի», համայնքային եւ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի: Իմ պաշտոնավարման ընթացքում մեր տարածքում որսագողության դեպք չի գրանցվել: Ասածս այն չէ, որ նման բան չկա, չեմ ասում, թե դա բացառվում է: Բանն այն է, որ «Հայանտառի» տարածքում որս անելու դեպքում տուգանքը կրկնակի է, հատուկ պահպանվող տարածքում՝ հնգակի: Որս անողը քաջ գիտակցում է, թե որտեղ է որս անում: Ասելս այն է, որ զգուշանում են հատուկ պահպանվող տարածքում որս անել:

Կարծում եմ՝ որսագողության դեմ պիտի պայքարեն ե՛ւ համայնքը, ե՛ւ «Հայանտառը» եւ մենք, քանզի կենդանիների միգրացիոն ուղիներն անցնում են այդ երեքին պատկանող տարածքներով: Անընդմեջ վերահսկողություն պիտի լինի:

ԱՅՑԵՔԱՐՏ



*Վարդան Գեւորգյան. ծնվել է 1965թ. Կապան քաղաքում, ավարտել է տեղի Հունան Ավետիսյանի անվան N9 միջնակարգ դպրոցը, ընդունվել Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը: 1983-1985 թվականներին ծառայել է խորհրդային բանակում, այնուհետեւ ուսումը շարունակել եւ բուհն ավարտել 1989 թվականին: Աշխատանքային կենսագրությունը սկսել է Կապանի գույքագրման միջշրջանային բյուրոյում, որտեղ աշխատել է մինչեւ 1992 թվականը, որից հետո կամավոր մասնակցել է հայրենիքի սահմանների պաշտպանությանը, եղել «Գրադ» կայանքի հաշվարկի հրամանատար մինչեւ 1996 թվականը, այնուհետեւ դիվիզիոնի հրամանատար եւ Կապանի բրիգադի շտաբի պետի տեղակալ: 2002 թվականից աշխատել է Կապանի կադաստրում՝ բաժնի պետ, 2008-ից «Կապանի կոմունալ ծառայություն» համայնքային հիմնարկի տնօրեն, այնուհետեւ՝ Կապանի քաղաքապետի տեղակալ: 2012-ից աշխատել է «Վայբլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ փոխտնօրեն: 2016-ի նոյեմբերին նշանակվել է ««Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն:*

*Ամուսնացած է, ունի երեք զավակ՝ երկու որդի, մեկ դուստր:*

ժողովրդական խոսք կա, չէ՞, տանդ դուռը պինդ փակիր, հետո՛ հարեւանիդ կասկածիր: Եթե որսագողերը տեսան, որ վերահսկում չկա, իրենց սեւ գործն անելու են: Եթե շաբաթական երեք-չորս անգամ վերահսկող խումբը լինի տվյալ տարածքում, ինչը մենք անում ենք, կենդանական աշխարհի վրա ձեռք բարձրացնողները չափը չեն անցնի:

**– Վերեւում խոսվեց ամենագնացների մասին, ինչը հուշում է համալիրի ընդհանուր տեխնիկական զինվածության մասին:**

– Այս պահին տեխնիկական զինվածությունը գնահատում եմ բավարար: Ճիշտն ասած՝ տեխնիկական վերազինման պլան եմ ներկայացրել «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր – Հայաստան» նախագծին: Այն իրականացնելու դեպքում համալիրն այս տարածաշրջանում դառնալու է օրինակելի: Ահա տեսեք, թե ինչ եմ ցանկանում, որ մեզ հատկացնի ծրագիրը. երեք հատ թռչող սարք: Վեց կիլոմետր շառավղով նկարահանումներ է անում, մի ողջ տարածքի, ասենք Գեղվա ձորի կենդանական աշխարհի մոնիթորինգ կարող ենք անել: Անցել են ժամանակները, երբ տեսուչը հեռադիտակով էր տարածքը հսկում: Ինչո՞ւ եմ սա ասում: Գեղվա ձորում հարուստ կենդանական աշխարհ կա, այն պաշտպանելու խնդիր ու պատասխանատվություն ունենք:

**– Սյունիքը լեռնահանքային արդյունաբերության տարածաշրջան է, ինչը կամա-ակամա բնապահպանական խնդիրներ է առաջացնում: Ի՞նչ իրավասություններ ունեք ներազդելու բնությունն ապականողների վրա, խոսքը ձեռնարկությունների մասին է:**

– Որպես պետական ոչ առեւտրային կազմակերպություն՝ ոչ մի: Պարզապես մեր համալիրի տեսուչը հսկում է, որ հատուկ պահպանվող տարածքներին վնաս չհասցվի:

**– Բայց Մեղրիում՝ Լիճքում, Տաշտունում հանքեր են շահագործվում, ինչը սպառնում է շրջակա միջավայրին, դա «Արեւիք» ազգային պարկի հարեւանությամբ է, փետրվարի 1-ին Մեղրիում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ նվիրված «Լիճքվազ» ընկերության հանքավայրի շահագործմանը, որ համարյա սահմանակից է «Բողաքար» արգելավայրին:**

– Այդ մասին իմ նկատառումները ներկայացրել եմ բնապահպանության նախարարությանը, հանրային քննարկման ժամանակ ասվել էր, որ այնպես պիտի արվի, որ հանքի շահագործումը չազդի շրջակա միջավայրին: Իմիջիայլոց, իմ գրությամբ ներկայացել էի ոչ թե տնօրեն, այլ շարքային քաղաքացի. *«Ապրելով Սյունիքի մարզում՝ տարիներ ի վեր տեսել եմ հանքարդյունաբերության ազդեցությունը, «Լիճքվազը» առաջին հանքավայրի վերաշահագործումը չէ Սյունիքում, մենք շրջապատված ենք հանքավայրերով, որ արդյունահանվում են տասնամյակներ ի վեր: Եթե մեկն ասի, որ այդ հանքավայրն ազդեցություն չի ունենալու շրջակա միջավայրի վրա, պարզապես ազնիվ չէ: Գոնե մեկը հաշվե՞լ է այդ հանքավայրի ազդեցությունը կենդանական աշխարհի վրա: Բա ասում եք՝ առաջավորասիական հովազը, բեզոարյան այծը, եւ այլն: Բա որ պայթեցումներ անեք, այդտեղ էլ կենդանի կմնա՞: Մտածո՞ւմ եք այդ մասին»:* Ասածս այն է, որ չեմ կարող կեցվածք ընդունել, թե ամեն ինչ նորմալ է, շրջակա միջավայրին ոչինչ չի սպառնում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Մեծարվեց գյուղատնտեսության ոլորտի նվիրյալը

**Սիսիանում մարտի 27-ին մեծարման երեկո էր կազմակերպվել՝ նվիրված Ռաֆիկ Ստեփանյանի ծննդյան 80-ամյակին: Նրա կյանքի մոտ 65 տարին անցել է գյուղատնտեսության բնագավառում, որից 30 տարին՝ կոլտնտեսության նախագահի եւ խորհրդային տնտեսության տնօրեն:**



Գյուղացու ընտանիքում աչք բացած մանուկը չորս տարեկան էր, երբ հայրը մեկնեց Հայրենական մեծ պատերազմ: Հայրենիքի պաշտպանը 1943-ին զոհվեց Սեւաստոպոլի ազատագրության ժամանակ: Ռաֆիկ Ստեփանյանը վաղ տարիքից ճաշակել է անհայրության դառը պտուղը, ընտանիքի հոգսը թեթեւացնելու նպատակով աշխատել կոլտնտեսությունում, կատարել զանազան աշխատանքներ՝ վեսկու հոտաղ, ավտոմեքենա բեռնաթափող, նախրապան եւ այլն: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել եւ ավարտել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումի դաշտավարական բաժինը: Հայրենի գյուղում աշխատել է գյուղատնտես, այգեգործական բրիգադի բրիգադավար: Աշխատանքին զուգընթաց սովորել եւ ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի հեռակա ագրոնոմիկական բաժինը: Եղել է հայրենի Գետաթաղի կոլտնտեսության նախագահ, այնուհետեւ Սիսիանի շրջկենտրոնի սերմնաբուծական տնտեսության տնօրեն, որը չորս տեղամաս ուներ՝ Սիսիան, Ուզ (այժմ՝Ույծ), Ղզլջուղ (այժմ՝ Իշխանասար) եւ Աշոտավան: Նրա վաստակն ու նվիրվածությունն աննկատ չեն մնացել: 1973-ին Գետաթաղի կոլտնտեսությունն արժանացել է ՀԱՄԽ-ի փոխանցիկ դրոշի, իսկ Ռաֆիկ Ստեփանյանը պարգեւատրվել է պետական բարձր պարգեւով՝ «Պատվո նշան» շքանշանով: 1983-ին երկրորդ անգամ է արժանացել «Պատվո նշան» շքանշանի: 1999-ից մինչեւ այժմ Ռաֆիկ Ստեփանյանն աշխատում է «Սյունիքի գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոն» ՓԲԸ-ում՝ գյուղատնտեսության գծով խորհրդատու:

Անմիջական մթնոլորտում անցած միջոցառման ժամանակ Ռաֆիկ Ստեփանյանի վաստակը արժեւորեցին եւ տարեդարձի առթիվ շնորհավորեցին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, Սիսիանի քաղաքապետ Արթուր Սարգսյանը, բարեմաղթանքի խոսքերի հետ մեկտեղ, նրա կյանքից հետաքրքրական դրվագներ ներկայացրին Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Գագիկ Խաչատրյանը, Հենզել Առաքելյանը, հոբելյարի եղբորորդի, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Ստեփանյանը, Քաջիկ Խաչատրյանը, Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի գործադիր տնօրեն Արմիկ Բակունցը, այլ անձինք:

Գյուղատնտեսության ոլորտում ներդրած ավանդի համար եւ ծննդյան 80-ամյակի առթիվ Ռաֆիկ Ստեփանյանը պարգեւատրվեց ՀՀ Սյունիքի մարզպետի շնորհակալագրով: Նրան հանձնվեց նաեւ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալ: Միջոցառման ժամանակ ելույթ ունեցավ հոբելյարը՝ երախտագիտություն հայտնելով մեծարման երեկոն նախաձեռնողներին:

Միջոցառման ընթացքում ճեպազրույցներ ունեցանք մարդկանց հետ, ովքեր մոտիկից շփվել, աշխատել են Ռաֆիկ Ստեփանյանի հետ:

### Հենզել Առաքելյան

Ռաֆիկը կազմակերպչական ունակություններով օժտված ղեկավարներից էր: Նրա այդ որակները հատկապես դրսեւորվեցին այն ժամանակ, երբ ադրբեջանցիները հեռանում էին Սիսիանի շրջանից: Այդ ժամանակ Սիսիանի խորհրդային տնտեսությանը միացված էր այժմյան Իշխանասարը, որ Ղզլջուղ էր կոչվում եւ բնակեցված էր ադրբեջանցիներով: Անասնապահությունը հիմնականում կենտրոնացված էր այդ տեղամասում: Միանգամից տասնյակ անասնապահներ, կթվորներ հեռացան շրջանից, բայց ինքը կարողացավ գործը հմտորեն կազմակերպել, նույնիսկ Երեւանից մարդիկ հրավիրեց Սիսիան, կարողացավ անասնագլխաքանակը ոչ միայն պահպանել, այլեւ անասնապահական մթերքների արտադրության ռիթմը չընդհատվեց: Պահանջկոտ էր նախ իր նկատմամբ, պատասխանատվության բարձր զգացում ուներ աշխատանքի նկատմամբ եւ բավականին խստապահանջ էր աշխատողների հանդեպ: Սիրում էր կարգապահությունը, հարգում էին իրեն, ինքն էլ ուշադիր էր մարդկանց եւ շրջապատի հանդեպ: Աշխատել է Գետաթաղի կոլտնտեսության նախագահ եւ Սիսիանի խորհտնտեսության տնօրեն: Չեմ հիշում մի դեպք, երբ արտադրության ծավալները կրճատվելու պատճառով Ստեփանյան Ռաֆիկի հարցը քննարկվեր շրջկոմի բյուրոյում: Եթե նրան հրավիրել են շրջանային կոմիտե, ուրեմն կար խրախուսման կամ պարգեւատրման հարց: Սիսիանի շրջանի լավագույն տնտեսական ղեկավարներից մեկն էր: Նրան գնահատում են այն մարդիկ, ովքեր հետը աշխատել են, շարքային ընտանիքից սերված, դժվարություններ տեսած անձնավորություն էր: Կեցցեն նրանք, ովքեր այսօր մեծարման այս միջոցառումը կազմակերպել են, նաեւ շնորհակալություն մարզպետարանին, որ գնահատել են հողի մարդուն, արժեւորում են այն մարդկանց, ովքեր այսօր ասպարեզում չեն, բայց անցած տարիներին շատ բան են արել Սիսիանի շրջանի գյուղատնտեսության զարգացման համար:

### Գագիկ Խաչատրյան

Իմ աշխատանքային գործունեությունը սկսել եմ կոմերիտմիության շրջկոմից, այն ժամանակ Ռաֆիկ Ստեփանյանը Սիսիանի խորհտնտեսության տնօրենն էր, այնուհետեւ տեղափոխվել եմ ՀԿԿ Սիսիանի շրջկոմ, եւ մեր աշխատանքը շփման եզրեր ուներ, ես աշխատում էի որպես կուրատոր, կցված եմ եղել նրա տնտեսությանը: Շաղատի կոլտնտեսության ղեկը 1986 թվականին ստանձնելուցս հետո, որպես ղեկավարներ հաճախակի ենք իրար հետ շփվել: Ստեփանյանը թե՛ Գետաթաղի կոլտնտեսությունը, թե՛ Սիսիանի խորհտնտեսությունը ղեկավարելիս առանձնանում էր որպես գյուղատնտեսական արտադրության հմուտ կազմակերպիչ: Փառքով ու պատվով կարողացավ իր պարտականությունները կատարել: Բավականին աշխատանքային փորձ է կուտակել, եւ այսօր էլ իր փորձը փոխանցում է գյուղացիական տնտեսությամբ զբաղվողներին, նրանց օգտակար լինում խորհուրդներով եւ առաջարկներով: Այս միջոցառումն օրինակ պիտի դառնա ողջ մարզի համար: Այսուհետ աշխատելու ենք վաստակ ունեցողներին մեծարել, պատվել, եւ այդ ավանդույթը պիտի շարունակենք ու մեծարենք տարբեր բնագավառներում աչքի ընկած մարդկանց:

### Դորվարդ Ստեփանյան (Ռաֆիկ Ստեփանյանի կինը)

Ամուսինս շատ նվիրված աշխատող է եղել, ընտանիքի հոգատար հայր, լավ ամուսին, հավատարիմ ընկեր: Աշխատանքն առաջին տեղում է եղել նրա համար, հանրային աշխատանքը շատ-շատ բարձր է գնահատել անձնականից, այդ ոգով էլ դաստիարակել է երեխաներին: Շատ նվիրված էր երեխաներին, այժմ էլ այդ նվիրվածությունը փոխանցվել է թոռներին:

### Տիգրան Վասիլյան

1987 թվականից մինչեւ կոլեկտիվ տնտեսության լուծարումն աշխատել եմ Լեռնաշենի կոլտնտեսության նախագահ եւ այդ տարիներին բախտ է վիճակվել շփվել Ռաֆիկ Ստեփանյանի հետ, շատ բան սովորել նրանից: Չափազանց կարգապահ անձնավորություն էր, աշխատանքի մեջ՝ բծախնդիր, խստապահանջ, բայց նաեւ բարի եւ ներող: Հիշում եմ, որ ժամանակ առ ժամանակ խրախուսանքների եւ պարգեւատրումների էր արժանանում, դա նաեւ երիտասարդներիս էր ոգեւորում: Գյուղատնտեսությունն իր բարդություններն ունի, մանավանդ, 1980-ականների կեսերին այդ դժվարությունները գլուխ էին բարձրացրել, բայց աշխատանքները հմուտ կազմակերպելով՝ կարողանում էր հաղթահարել դրանք: Մինչեւ կոլտնտեսությունների լուծարումը նա կարողացավ ոգեւորությամբ կատարել իր պարտականությունները: Իսկ դրանից հետո որպես գյուղատնտեսության գծով խորհրդատու իր փորձն ու գիտելիքները փոխանցել է սկսնակ հողագործներին, բանջարաբույծներին, այգեգործներին, անասնապահներին՝ միշտ մնալով հարգված եւ սպասված անձնավորություն:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սիրուշ Վանյանս, իմ, ամուսնուս ու ընտանիքիս բոլոր անդամների շնորհակալության ու երախտագիտության խոսքն եմ հղում Ձեզ՝ իմ հայրենի քաղաքի բժիշկ՝ Գագիկ Վաղարշակի Թունյան, Ձեր մարդասեր ու հոգատար վերաբերմունքի համար: Դուք, Ձեր մասնագիտական հմտություններով, ոչինչ չեք խնայում ծանր հիվանդների համար, նրանց հետ անց կացնում անքուն գիշերներ՝ պարգեւելով կյանք:

Ես շնորհակալ եմ Ձեզ, քանզի կանգնած էիք իմ կողքին՝ որպես բժիշկ, որպես մարդ, եւ, օժտված լինելով մարդկային ամենափայլուն հատկանիշներով, բժշկական երկար տարիների փորձով եւ հմտություններով, փրկեցիք աղջկաս կյանքը:

Աղջկաս մոտ, հետազոտությունների արդյունքում, հայտնաբերվել էր կրծքագեղձի չարորակ ուռուցք: Մոտ մեկ ամիս խորհրդակցեցինք մայրաքաղաքի լավագույն հիվանդանոցների ուռուցքաբանների հետ, լսեցինք նրանց կարծիքները: Որոշ մասնագետներ մատնացույց արեցին ուռուցքաբան Գագիկ Թունյանին: Եվ մենք վերադարձանք ծննդավայր Գորիս, որտեղ եւ բժիշկ Թունյանի որոշմամբ կատարվեց վիրահատություն՝ մաստէկտոմիա:

Այսօրվա դրությամբ աղջկաս առողջությունը լավ վիճակում է:

«Գիտելիքները մարդուն կշիռ են տալիս, իսկ արարքները՝ ոսկու փայլ». այս աֆորիզմն անմիջականորեն Ձեզ է վերաբերվում՝ Գորիսի գլխավոր բժիշկ, ուռուցքաբան, բժշկական գիտությունների թեկնածու Գագիկ Վաղարշակի Թունյան:

Շնորհակալական խոսքս եմ հղում նաեւ հիվանդանոցի վիրաբուժական անձնակազմին եւ մասնավորապես վիրաբույժ Դավիթ Մխիթարյանին, անեսթեզիոլոգ Դավիթ Մաշուրյանին, ավագ քույր Ագապի Պողոսյանին:

# Մեկ տարի առաջ Թալիշում նահատակվեցին սյունեցի կամավորականները


Թալիշ, նահատակված սիսիանցիների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ

Մեկ տարի առաջ՝ 2016թ. ապրիլի 4-ին, Թալիշ գյուղում հակառակորդի հրետակոծության հետեւանքով զոհվեց սյունեցի ութ կամավորական՝ Սեդրակ Սերգեյի Ասրյան (Դարբաս), Սերգեյ Գուրգենի Դանղյան (Սիսիան), Դավիթ Բագրատի Սարգսյան (Բալաք), Մայիս Երջանիկի Միրզոյան (Դարբաս համայնքի ղեկավար), Արմեն Մինասի Բեգլարյան (Ախլաթյան համայնքի ղեկավար), Եղիշ Արտավազդի Նիկալյան (Լծեն), Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան (Սիսիան), Գագիկ Կոլյայի Փարսադանյան (Կապան): Իսկ վիրավոր կամավորականներից Կամո Ծերունի Համբարձումյանը (Վաղատին) մահացավ ապրիլի 18-ին, Արմեն Արեգի Հովհաննիսյանը (Ծղուկ)՝ ապրիլի 7-ին:

Անցել է մեկ տարի, եւ տարբեր առիթներով մեր խոնարհումն ենք բերել նրանց վառ հիշատակին: Հայրենիքի զոհասեղանին գիտակցաբար իրենց կյանքը դրած նահատակներն ընդմիշտ կապրեն, բայց արդեն քարե մահարձանի, հուշաղբյուրի տեսքով…

Վերստին մեր խորին ցավակցությունն ենք հայտնում ինչպես նրանց հարազատներին, այնպես էլ՝ ողջ հայ ժողովրդին:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Հյուր էին սունդուկյանցիները

**ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային կանգառ» ծրագրի շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում ապրիլի 9-ին ներկայացվեց Հրաչ Բեգլարյանի երկու գործողությամբ «Արծվաբույն» պիեսը՝ բեմադրությունը Դավիթ Հարությունյանի:**

– *Վաղուց էր միտք հղացել պիես բեմադրել Արցախյան պատերազմի թեմայով,* – ներկայացումից առաջ «Սյունյաց երկրին» փոխանցեց բեմադրիչ Դավիթ Հարությունյանը, – *թեմային միայն արձակագիրներն են անդրադարձել, չափածո ստեղծագործություններ կան, փաստավավերագրություն, կինոֆիլմեր են ստեղծվել, հիմա էլ ստեղծվում են: Եվ այս ամենի մեջ փնտրում էի մի ստեղծագործություն, որ կարելի է բեմ հանել, ներկայացնել հետաքրքրական սյուժեով, որ եւ իրականությանը մոտ լինի, եւ գեղարվեստականությունը պահպանվի: Երկար ենք աշխատել պիեսի հեղինակ Հրաչ Բեգլարյանի հետ, միասին տարբերակներ ենք խմբագրել, մինչեւ գործը բեմ է բարձրացել:*

Բեմադրությունից առաջ խոսք ասաց Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի փոխտնօրեն, արձակագիր, դրամատուրգ Նելլի Շահնազարյանը: Նա նշեց, որ արցախյան թեման բոլորիս համար եւ ցավ է, եւ հույս է, եւ ուրախություն: *«Ցավոք սրտի այս պատերազմը դեռ շարունակվում է, իսկ մենք հոգով ամրանալու խնդիր ունենք, համարեք, որ այս ներկայացումը հարգանքի տուրք է ընկած տղաների հիշատակին եւ հոգով ամրանալու կոչ»,* – իր խոսքն այսպես ավարտեց Ն.Շահնազարյանը:

Իրադարձությունների կենտրոնը սահմանամերձ Քարակապ գյուղն է, գործող անձինք՝ ազատամարտիկները՝ հավաքված Հայաստանի տարբեր վայրերից՝ իրենց բառ ու բանով, մտածելակերպով, նաեւ երկու ոտքից վիրավոր ազատամարտիկին խնամող ծեր կին, առաջնագծում հայտնված լրագրողուհի, ում ճակատագրի շուրջ ծավալվում են իրադարձությունները: Նա իր մասնագիտական պարտքը կատարելուն զուգահեռ՝ հետաքրքրվում է պատերազմ մեկնած ամուսնու ճակատագրով, ով, պարզվում է, զոհվել է…

Հուզականության առումով բավականին ծանր ներկայացում է՝ թաթախված ողբերգականությամբ ու հումորով: Դեպքերն ընթանում են առանց ավելորդ պաթոսի, անհարկի բացականչությունների: Կռվող տղաներից մեկը փիլիսոփայում է՝ Քաղաքում պղինձ են հավաքում ու վաճառում թուրքին, որ նա էլ սենց գյուլլա սարքի ու մեզ վրա կրակի, իսկ մենք էստեղ հայրենիք ենք պահում:

Բեմադրության ավարտին հանդիսականը ջերմությամբ ընդունեց դերասանների խաղը՝ բացականչություններով մեծարելով նրանց: Իսկ Սյունիքի մարզպետարանի մշակույթի բաժնի պետ Սարգիս Դավթյանը սունդուկյանցիներին շնորհակալություն հայտնեց հանդիսականին թատերական երեկո պարգեւելու համար:

Բեմադրության առաջնախաղը կայացել էր փետրվարի 7-ին, 8-ին Երեւանում: Այս անգամ մայր թատրոնի ստեղծագործական կազմը հյուրախաղերը սկսեց Ստեփանակերտում, այնուհետեւ պիեսը բեմադրվեց Գորիսում: Կապանում գտնվելով՝ սունդուկյանցիները եղան Բաղաբերդի եւ Գարեգին Նժդեհի հուշահամալիրներում, հարգանքի տուրք մատուցեցին արցախյան նահատակների եւ ազգի նվիրյալ Գարեգին Նժդեհի հիշատակներին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Մեկ ժամ ռոմանսի հետ

**«Ռոմանսի քնքուշ մեղեդիների ներքո». այդպես էր կոչվում մարտի 31-ին Կապանի էլեկտրոնային գրադարանում անցկացված երեկոն, որ կազմակերպել էր Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը:**

Ռոմանսի հայրենիքը Իսպանիան է, որտեղ ռոմանս էին կոչվում երգերը, որոնք երգվում էին իսպաներեն (ռոմաներեն)՝ ի տարբերություն լատիներենի: Այնուհետեւ այդ ժանրն անցավ Ռուսաստան, որտեղ ռոմանս էին կոչվում նվագակցություն ունեցող, մեծ մասամբ քնարական կամ քնարադրամատիկական բնույթի, գլխավորապես սիրային բովանդակություն ունեցող փոքր ձեւի վոկալ ստեղծագործությունները: 19-րդ դարի առաջին կեսում ձեւավորվեց ռուսական ռոմանսի դպրոցը, որի ականավոր ներկայացուցիչները դարձան Գլինկան, Մուսորգսկին, Ռիմսկի-Կորսակովը, Չայկովսկին, Ռախմանինովը, Ալյաբեւը: Հայկական ռոմանսի զարգացմանը մեծապես նպաստել են Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը:

Երեկոն վարում էր մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի ռուսաց լեզվի դասատու Նունե Գեւորգյանը, ով յուրաքանչյուր կատարումից առաջ անդրադառնում էր տվյալ ռոմանսի ստեղծման պատմությանը, նրա ակունքներին՝ նշելով, որ ռոմանսի հետ հանդիպումը միշտ էլ հաճելի եւ սպասված է: Եվ, իրոք, հանդիսականին գեղագիտական հաճույք պատճառեցին մենակատարներ Թերեզա Հովհաննիսյանի, Իրինա Դավիդյանի, Գայանե Վարդիկյանի կատարումները (նվագակցողներ՝ Աստղիկ Գրիգորյան, Միլենա Մինասյան):

Երեկոյի ավարտին Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի տնօրեն Ռուզան Ավանեսյանը նշեց, որ երկար ժամանակ մեր քաղաքում չէին հնչել ռոմանսի հոգեթով մեղեդիներ, իսկ երեկոն մի ժամ նրա մասնակիցներին կտրեց լարված առօրյայից, եւ երախտագիտություն հայտնեց թե երգիչ-կատարողներին, թե նվագակցողներին, թե հանդիսականներին: Միջոցառմանը մասնակցում էին Արամայիս Հակոբյանը եւ նրա կիթառահար սաները կատարեցին սրտամոտ ու հարազատ մեղեդիներ ու երգեր, հնչեցին կնոջը, մայրական սիրուն ու հավատարմությանը նվիրված բանաստեղծություններ (Պարույր Սեւակ, Հովհաննես Շիրազ): Շնորհավորանքներից զատ միջոցառումը ներկաներին պարգեւեց ուրախ տրամադրություն: Արժանին մատուցվեց տարբեր մասնագիտությունների տեր կանանց, գրադարանավարներին, մանկավարժներին, մյուսներին: Սփոփանքի խոսքեր հնչեցին որդեկորույս մայրերի հասցեին: Միջոցառման կազմակերպչին՝ Ռուզաննա Գալստյանին շնորհակալություն հայտնեցին Սվետլանա



Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Միեր Պոլոսկովը:

* * *

Ապրիլի 5-ին նույն գրադարանում միջոցառումների կազմակերպիչ Ռուզաննա Գալստյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ցերեկույթ նվիրված գարնանային տոներին (մարտի 8, ապրիլի 7): Մշակույթի կենտրոնի խմբավար Գեւորգյանը, Կառլեն Թադեւոսյանը, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը, ով ի մասնավորի նշեց, որ հնուց անտի հայերը մայրապաշտ ժողովուրդ են եղել, դրա ապացույցն է այն, որ հայոց աշխարհում բազում եկեղեցիներ կրում են սուրբ Մարիամ Աստվածածնի անունը: Նա նաեւ անակնկալ ուներ. տիկնոջ հետ երգային մի կատարում նվիրեց միջոցառմանը ներկա կանանց եւ աղջիկներին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**ԿՈՐԵԼ Է** Երեւանի Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանի 2009-10 ուստարվա շրջանավարտ Արինե Վասակի Ստեփանյանի AB 101798 դիպլոմը:
Համարել անվավեր:

**«Սյունյաց երկիր» թերթի փարեկան հաշվետվությունը**

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի 2016թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Համախառն եկամուտ՝......................25 141 516
Այդ թվում՝
Նվիրատվություն՝.............................................0
Սուբսիդիա՝ ...........................................500 000
Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝....................6 626 000

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.04.2017թ.: